Azg
armenian daily
22 ՄԱՅԻՍ 1998 ՈՒՐԲԱԹ # 90 (1593)

Մեծաթիվ զոհեր եւ վիրավորներ Գալիի շրջանում

ԹԲԻԼԻՍԻ, 21 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ. Աբխազիայի Գալիի շրջանում կասաղի զինված ընդհարումների հետեւանքով աբխազական զինված խմբերի անդամներից զոհվել է մոտ 30-ը եւ վիրավորվել 17-ը, սպանվել են շրջանի 3 եւ վիրավորվել 4 վրացի բնակիչներ: Այդ մասին այսօր առավոտյան հաղորդել է Վրաստանի ազգային հեռուստատեսությունը, վկայակոչելով հակամարտության գոտու արժանահավատ աղբյուրներ:

Մարտերը Գալիի շրջանում բռնկել էին չորեքշաբթի վաղ առավոտյան աբխազական զինված կազմավորումների եւ վրացի գրոհայինների միջեւ: Աբխազիայի ներքին գործերի նախարարության մամլո քարտուղար Բադրա Այբան հաղորդել է, որ ընդհարումների հետեւանքով սպանվել է 7 վրացի գրոհային, մեկը վիրավորվել է եւ մեկն էլ գերի վերցվել: Փոխհրաձգության ժամանակ զոհվել է նաեւ Աբխազիայի ներքին գործերի նախարարության մի աշխատակից, մի ուրիշ միլիցիոներ ծանր վիրավորվել է:

Աբխազական կողմի տվյալներով, մարտը տեղի է ունեցել աբխազական ոստիկանության եւ «Սոիտակ լեգեոն» եւ «Անտառային եղբայրներ» կազմակերպությունների վրացական զինված խմբերի միջեւ: Ընդհարմանը նախորդել էին Գալիի շրջանի աբխազական գյուղերի դիրքերի գնդակոծումներ մայիսի 18-ին եւ 19-ին:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Թույլ չտանք արկածախնդրական եւ վրեժխնդրության դրսեւորումներ

Առաջարկեց վարչապետը խորհրդարանին

ՆԱՐԲԵԼ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Անցած շաբաթ ԱԺ-ում հավանության արժանացավ նորաստեղծ կառավարության գործունեության ծրագիրը, հավանության արժանացավ նշանակում է, որ խորհրդարանը մինչեւ Սահմանադրությամբ նշված ժամկետը չհավաքեց անհրաժեշտ ստորագրություններ կառավարությանն անվստահություն հայտնելու համար: Այս քայլը ինքնավստահություն ներշնչեց գործադիր մարմնին, իսկ օրենսդիրներն իրենց թերարժեք զգացին փորձելով առաջիկա իսկ արտահերթ ընտրություն թռթափել երկրորդական լինելու բարդույթը: Պատահականության կամոք դեպքերի արագացուցիչը դարձավ պատգամավոր Վարդան Խաչատրյանը իր երկու օրենսդրական նախաձեռնություններով «Եկամտահարկի եւ ավելացած արժեքի մասին» օրենքներում բարեփոխումներ կատարելու նախաձեռնությամբ: Ինչպես նշել էինք երեկ, եկամտահարկի օրենքում առաջարկվող փոփոխությունը, չնայած կառավարության կոշտ ընդդիմությանը, ընդունվեց ԱԺ որակյալ մեծամասնությամբ 104 «կողմ», 0 «դեմ» եւ ընդամենը 3 «ձեռնպահ»: Երեկ վճռական օր էր, ուստի գործի դրվեց գործադիր իշխանության ողջ ծանր հրետանին:

Դիտավորությո՞ւն, թե՞ մտահոգություն

«Երկրապահն» ամենաբազմամարդն է եւ ազդեցիկը խորհրդարանում, ուստի վարչապետ Արմեն Դարբինյանը պատգամավորական խմբի նիստին: Նիստը վարում էր ոչ թե խմբի նախագահ Սմբատ Այվազյանը, այլ ինքը ԱԺ նախագահը, որի հետ, ըստ խորհրդարանում շրջող լուրերի, վաղորդ խոսել էր հանրաքվեության նախագահը: Որոշում ընդունվեց չընդունել Վարդան Խաչատրյանի առաջարկությունը ԱԱՀ 20 տոկոս դրույքաչափը 12 տոկոսի իջեցնելու

Տես էջ 11



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Ռուսաստանի եւ Թուրքիայի գլխավոր շտաբների պետերը հուշագիր ստորագրեցին

ՄՈՍԿՎԱ, 21 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ. Ռուսաստանի եւ Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբների պետերը՝ Անատոլի Կվաշնինը եւ Իսմայիլ Քարադային բանակցություններ վարելուց հետո չորեքշաբթի օրը դրանց արդյունքների հիման վրա հուշագիր են ստորագրել Ռուսաստանի Դաշնության եւ Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբների փոխըմբռնման մասին: «Ռազմական բնագավառում մեր հետագա համագործակցությունը, համաժողովրդական եւ տարածաշրջանային անվտանգության ամրապնդումը մենք կառուցելու ենք հենց փոխըմբռնման սկզբունքներով», ընդգծել է Անատոլի Կվաշնինը: Կողմերը մտադիր են մշակել եւ ստորագրել համաձայնագիր ռազմական բնագավառում համագործակցելու մասին, որը շոշափեր ռազմական ուսուցման եւ տարբեր բնագավառներում համագործակցության հարցերը: Նախատեսվում է ընդլայնել մասնակցությունը համատեղ զորավարժություններին, որոնք նախատեսվում են ՆԱՏՕ-ի կամ ազգային հրամանատարության կողմից «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Նախատեսվում է նաեւ [illegible] միջազգային դիտորդներ Սեւ ծովի ջրատարածքում շրջակա միջավայրի պատշաճության գործում համագործակցելու նպատակով:

ՌԴ Պետդումայի նախագահը կայցելի Թուրքիա

ԱՆԿԱՐԱ, 21 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ. ՌԴ Պետդումայի նախագահ Գենադի Սելեզնյովը մայիսի 26-28-ը պաշտոնական այցով կլինի Թուրքիայում: Ինչպես այսօր հայտարարվել է Թուրքիայի մայրաքաղաքում, այցն իրականացվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Հիքմեթ Չեթինի հրավերով: Ռուսաստանյան խորհրդարանի ստորին պալատի խոսնակը Ստամբուլում հանդիպում կունենա թուրք գործընկերոջ հետ: Անկարայում նախատեսված են երկու երկրների խորհրդարանական պատվիրակությունների բանակցություններ, հանդիպումներ Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի եւ վարչապետ Մեսութ Յըլմազի հետ: Նրանց ուշադրության կենտրոնում կլինեն ռուս-թուրքական հարաբերությունների զարգացման ներկայիս կացությունն ու հեռանկարները:

Վարդան Ուզունյան. Հայաստանի իշխանությունները պետք է որդեգրեն հստակ քաղաքականություն սփյուռքի նկատմամբ

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ռամկավար Ազատական կուսակցության Կենտրոնական վարչության անդամ, Եվրոպայի եւ Միջին Արեւելքի բաժնի համակարգող, Լոնդոնի Թեթեյան մշակութային միության նախագահ Վարդան Ուզունյանի գնահատականով, «այսուհետ սփյուռք-հայրենիք հարաբերությունները այլ բնույթ կստանան, բաց եւ ազատ քննարկումները դրական ազդեցություն կունենան բոլոր տեսակի հարաբերությունների վրա»:

«Նոյյան տապանի» թղթակցի հետ զրույցում պրն Ուզունյանը նշեց, որ սփյուռքում շատ բացասական վերաբերմունք կա հայրենիքում տնտեսական ներդրումների, նկատմամբ, որը հիմնված էր անցյալի դառը փորձի վրա: Այդ իսկ պատճառով, ըստ նրա, առաջին քայլը պետք է լինի այդ բացասական վերաբերմունքը փոխելը, հաշվի առնելով Հայաստանի տնտեսական, ֆինանսական եւ այլ ոլորտներում եղած փոփոխությունները: «Մենք ունենք կոնկրետ ներդրումների ծրագիր, որը կիրականացվի ոչ թե կուսակցության, այլ անհատների կողմից», նշեց նա:

Պրն Ուզունյանը տեղեկացրեց, որ որոշ ներդրումներ կարվեն նաեւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով, որի փոխնախագահ Գագիկ Հարությունյանի հետ ունեցած երկարատեւ հանդիպման ընթացքում ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության պատվիրակությունը ներկայացրել էր իր առաջարկները ֆինանսական ներդրումների կազմակերպման եւ աշխատանքային ծրագրերի մշակման վերաբերյալ: «Կան մեծ թվով կոնկրետ գաղափարներ, որոնց իրականացման դեպքում հնարավոր կլինի արագ կերպով բարձրացնել Հիմնադրամի դրամագլուխը», ասաց ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության ներկայացուցիչը:

Վարդան Ուզունյանի խոսքերով, «Հայաստանի իշխանությունները պետք է որդեգրեն հստակ ռազմավարություն սփյուռքի նկատմամբ նաեւ քաղաքականության մեջ, որովհետեւ սփյուռքը շատ մեծ պրոբլեմներ ունի, որոնց մի մասն է կազմում Հայաստանի քաղաքական հիմնական նպատակների իրականացումը»

Դեմիրելը Ռ. Քոչարյանին չի հրավիրել Կասպյան-սեւծովյան խորհրդաժողովին

Ստամբուլում լույս տեսնող «Ժամանակ» օրաթերթից երեկ տեղեկացանք, որ նախագահ Ռոբերտ Քոչարյանը չի հրավիրվել մայիսի 25-27-ը Ստամբուլում տեղի ունենալիք «Կասպյան եւ սեւծովյան տարածաշրջանների էներգետիկայի խորհրդաժողովին»: Թուրքիայի արտաքին տնտեսական հարաբերությունների խորհրդի, Սեւծովյան տնտեսական համագործակցության գործադիր խորհրդի եւ Քեմբրիջի էներգետիկ հետազոտությունների ընկերակցության համատեղ ջանքերով կազմակերպվող այդ խորհրդաժողովը, որը տեղի է ունենալու «Լութֆի Կըրդար» միջազգային կենտրոնում, անց է կացվելու Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հովանավորությամբ: Վերջինս, օգտվելով իր իրավասություններից, ինչպես գրում է «Ժամանակը», որոշել է ժողովին հրավիրել միայն Կասպից եւ Սեւ ծովերի առափնյա երկրների ղեկավարներին, այսինքն այդ տարածաշրջանների բոլոր երկրների նախագահներին, բացի Հայաստանի նախագահից: «Նախագահ Դեմիրելի նախընտրության ուղղությունը մեկ անգամ եւս առաջնորդում է, որ շարունակվում է Թուրքիայի վերաբերմունքը Հայաստանի իշխանությունների նկատմամբ եւ հարաբերություններում առկա է լարություն», գրում է «Ժամանակը»:

Նույն թերթից տեղեկանում ենք, որ խորհրդաժողովի նիստերին մասնակցելու է Հայաստանի վարչապետ Ռոլանդ Ադոնցը:

ԲԱՔՈՒ

Համանախագահները Երեւանից Բաքու են ժամանել ոչ հոռետեսական տրամադրությամբ

Նշում է Վաֆա Գուլուզադեն

ԲԱՔՈՒ, 21 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հայաստանը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպման ընթացքում որեւէ նոր առաջարկություն չի առաջադրել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ, նշել է Ադրբեջանի արտաքին քաղաքական հարցերի պետխորհրդական Վաֆա Գուլուզադեն: Ըստ ANS-press գործակալության հաղորդման, տեւական ընդմիջումից հետո ԵԱՀԿ ՄԽ համանախագահների աշխատանքը գնահատելով դրական, նա նշել է, որ համանախագահները շարունակում են պնդել ղարաբաղյան հակամարտության կարգավորման փուլային տարբերակը:

Խոսելով այն մասին, որ ԱՄՆ, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի բարձրաստիճան դիվանագետները Երեւանից վերադարձել են ոչ հոռետեսական տրամադրությամբ, Վ. Գուլուզադեն ընդգծել է, որ համանախագահների կարծիքով Հայաստանի նոր ղեկավարությունը հասկանում է իրավիճակը եւ մտադիր է նոր քայլեր ձեռնարկել այդ խնդրի լուծման ուղղությամբ: Ըստ նրա, համանախագահները նաեւ չեն բացառում եւ բարդությունները այդ ճանապարհին, քանի որ, ըստ նրանց, Ռոբերտ Քոչարյանը այդ հանրաքվեության նոր ղեկավարն է, իսկ իր ավելի վաղ առաջ քաշած կարգախոսները եւ դիրքորոշումները հայտնի են բոլորին: Դրանց փոփոխության համար որոշակի ժամանակ է հարկավոր: Իր կողմից, հայտարարել է պետխորհրդականը, Ադրբեջանը պատրաստ է կառուցողական քայլերի եւ բանակցային գործընթացի վերսկսման

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՄԲԱԳԻԿ

Սկիզբը էջ 1

Մեծ ընդմիջումից հետո Արմեն Դարբինյանը ելույթ ունեցավ խորհրդարանի առջեւ իր խոսքը կառուցելով երկու սյուների վրա. ա) կառավարության ծրագիրը, ի մասնավորի ֆինանսական եւ հարկային քաղաքականությանը վերաբերող հատվածը ընդունվել է առանց «գաղափարական, սկզբունքային ճնշադատության: Նույն պատգամավորների կողմից այդ դրույթները որակվեցին որպես արհեստավարժորեն գրված եւ անգամ ասվեց, թե միանգամայն երեւում է, որ ծրագիրն այդ հատվածով գրել են արհեստավարժները, բայց այսօր մենք ստացանք բացահայտորեն հակառակ երկու օրենքների նախագիծ, որոնք հակասում են կառավարության ոչ միայն գաղափարական, այլեւ ընթացակարգային մոտեցումներին», բ) հարկային օրենքների բարեփոխումների համալիր փաթեթը կառավարությունն ինքն անձամբ կներկայացնի ԱԺ-ին մինչեւ 1999 թ. պեսբյուջեի քննարկումների ավարտը: Այսինքն՝ ԱԺ-ն իրավասու չէ այսօր փոփոխելու հարկային քաղաքականությունը, նման օրենսդրական նախաձեռնություններ կարող են գալ միայն կառավարությունից, որը տարվա վերջին պետք է ներկայացնի բյուջեի կատարողականը:

Ո՞վ է ժամանակավոր կառավարությունը, թե՞ ԱԺ-ն

Արմեն Դարբինյանը քաղաքական հայտարարություն կատարեց ԱԺ-ի ներկա նախաձեռնության մեջ նշելով հստակ դիտավորություն, ավելի ստույգ նախընտրական շատախոսություն «Մենք չպետք է թույլ տանք որեւէ գիսկային դաշտի ձեւավորումը: Չպետք է թույլ տանք, որ արկածախնդրական եւ, Աստված մի արասցե, վրեժխնդրական դրսեւորումները գերակայեն»: Թեեւ Արմեն Դարբինյանը խոսում էր ազգային համաձայնության եւ համախմբման մասին, սակայն ելույթը ճնշիչ էր եւ սպառնալիքի երանգով. «Մենք կանգնած ենք ոչ միայն կառավարության ծրագրի իրականացման առջեւ, այլեւ լրջագույն հիմնախնդիրների եւ մեր ներքին քաղաքականության, եւ տնտեսության, եւ արտաքին քաղաքականության մեջ»: Կառավարության ներկա ծրագրի դեմ հնչած ելույթները նա որակեց իբրեւ դեստրուկտիվ, որոնք «փորձում են քայքայել առանց այն էլ փխրուն քաղաքական պատկերը»: Անպատասխան չմնացին նաեւ Պարույր Հայրիկյանի եւ Վիգեն Խաչատրյանի ելույթները ընդդեմ կառավարության. «Խորհուրդ կտայի եւ կցանկանայի այն քաղաքական գործիչներին, որոնց չհաջողվեց նախագահ դառնալ եւ որոնք ըստ էության այսօր մեղադրում են կառավարությանն արհեստավարժության մեջ, իրենք էլ փորձեն դառնալ արհեստավարժ քաղաքական գործիչ, որի առաջին բնութագիրը պետք է լինի գերագույն պատասխանատվությունը հասարակության, պետության առջեւ»: Հաջորդ ելույթը ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանը վերադարձավ իր դիրքերը՝ խոսքը մերժելով դիտավորության կասկածը: Վարդան Խաչատրյանի օրինագիծը պատրաստ է եղել բավական վաղուց, եւ խորհրդարանի մղումները ազնիվ են: Միաժամանակ, Խոսրով Հարությունյանը փորձեց պատասխանել իրեն վերագրված հատատության ուսադիրների պատիվը. «Խորհուրդ եմ տալիս շատ պատասխանատու օգտագործել այս

ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ամբիոնը... Հարգեմ ԱԺ-ին, հարգել ԱԺ-ին նշանակում է հարգել ժողովրդին... Մենք տեսել ենք ճնշման տարբեր մեթոդներ եւ չփորձենք պղտորել զուլալվելու միտում ունեցող քաղաքական մթնոլորտը»: Էդ. Սանդոյանի այն արտահայտությունը, թե «ուզում եք ընդունեք, ուզում եք ոչ, կառավարությունը միեւնույն է, չի կատարի», չպետք է այսուհետեւ հնչի խորհրդարանում: Հետադարձ ակնարկ կատարելով նշենք, որ Ռոբերտ Քոչարյանը երբ դեռ վարչապետն է, ԱԺ-ի հետ հարաբերություններում շատ ավելի մեղմ էր քան ներկա կառավարությունը: Անկախ այս ԱԺ-ի հանդեպ ունեցած գնահատականից, մեր քաղաքական դաշտում չպետք է հաստատվի ուժային ճնշման ավանդույթը: ՀՀՇ «Մեր դեմ խաղ չկա» սկզբունքը բումերանգի պես կարող է վերադառնալ:

Ի՞նչ ենք կորցնում եւ ի՞նչ ենք ստանում

ԱԺ ֆինանսավարկային, բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանը հավատարիմ մնաց իրեն: Հիշատակելով ԱՄՆ նախագահ Տրումենին, որն անընդհատ որոնում էր միձեռանի տնտեսագետի, նա հավաստեց, որ ինքը չի կարող միձեռանի տնտեսագետ լինել, իբրեւ վերին ատյանի ճշմարտություն ընդել ԱԱՀ դրույքաչափի պահպանումը հանուն սոցիալական նպատակադրումների: Տնտեսագետները միշտ փաստարկում են մի կողմից այսպես է, մյուս կողմից այլ: Արմեն Եղիազարյանը ընդհանրացրեց բանավեճի աղը, որն անշուշտ բնավ ԱԱՀ դրույքաչափի դարձ իջեցումը չէ, այլ մեր պետության զարգացման ուղեգիծը մենք կառուցում ենք մաքուր ազատական համակարգ, թե՞ հարկային վարչարարությամբ ստացվածը տարբեր ուղղություններով վերաբաշխող սոցիալական պետություն: Այսօր այդ կերպ վերաբաշխվում է ՀՆԱ 20 տոկոսը, զարգացած երկրներում դա ամբիոնը... Հարգեմ ԱԺ-ին, հարգել ԱԺ-ին նշանակում է հարգել ժողովրդին... Մենք տեսել ենք ճնշման տարբեր մեթոդներ եւ չփորձենք պղտորել զուլալվելու միտում ունեցող քաղաքական մթնոլորտը»: Էդ. Սանդոյանի այն արտահայտությունը, թե «ուզում եք ընդունեք, ուզում եք ոչ, կառավարությունը միեւնույն է, չի կատարի», չպետք է այսուհետեւ հնչի խորհրդարանում: Հետադարձ ակնարկ կատարելով նշենք, որ Ռոբերտ Քոչարյանը երբ դեռ վարչապետն է, ԱԺ-ի հետ հարաբերություններում շատ ավելի մեղմ էր քան ներկա կառավարությունը: Անկախ այս ԱԺ-ի հանդեպ ունեցած գնահատականից, մեր քաղաքական դաշտում չպետք է հաստատվի ուժային ճնշման ավանդույթը: ՀՀՇ «Մեր դեմ խաղ չկա» սկզբունքը բումերանգի պես կարող է վերադառնալ:

Ի՞նչ ենք կորցնում եւ ի՞նչ ենք ստանում

ԱԺ ֆինանսավարկային, բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանը հավատարիմ մնաց իրեն: Հիշատակելով ԱՄՆ նախագահ Տրումենին, որն անընդհատ որոնում էր միձեռանի տնտեսագետի, նա հավաստեց, որ ինքը չի կարող միձեռանի տնտեսագետ լինել, իբրեւ վերին ատյանի ճշմարտություն ընդունել ԱԱՀ դրույքաչափի պահպանումը հանուն սոցիալական նպատակադրումների: Տնտեսագետները միշտ փաստարկում են մի կողմից այսպես է, մյուս կողմից այլ: Արմեն Եղիազարյանը ընդհանրացրեց բանավեճի աղը, որն անշուշտ բնավ ԱԱՀ դրույքաչափի դարձ իջեցումը չէ, այլ մեր պետության զարգացման ուղեգիծը մենք կառուցում ենք մաքուր ազատական համակարգ, թե՞ հարկային վարչարարությամբ ստացվածը տարբեր ուղղություններով վերաբաշխող սոցիալական պետություն: Այսօր այդ կերպ վերաբաշխվում է ՀՆԱ 20 տոկոսը, զարգացած երկրներում դա ՀՆԱ 50 տոկոսն է, զարգացող երկրներում 25-ը: Կառավարությունը պնդում է, թե ձեռներեցության համար արտոնյալ պայմաններ ստեղծելով, անուղղակի հարկերը նվազեցնելով երկիրը սոցիալական պայթյունի կարելի է հասցնել: Արմեն Եղիազարյանը չգիտեր լուծման բանալին, ուստի ձեռնպահ մնաց միանշանակ դատողությունից:

Ինքնաթիռ էր «Հանդիպում» խմբակցության նախագահ Բաբկեն Արարքցյանի ինքնադրսեւորումը, որը գրեթե հեւասպառ, այլայլված եկավ նիստերի դահլիճ, եւ պատշգամբից մեղադրեց կառավարությանը Սահմանադրության միջոցով: Կառավարությանն իրենց գրած Սահմանադրությամբ լծակ էր տրվում զսպելու ԱԺ-ին. «ԱԺ-ն կարող է ընդունել որոշումներ, որ հաջորդ տարի բյուջե չլինի»: Հանուն բյուջեի լինելության եւ Սահմանադրության 75-րդ հոդվածի ոգու (հոդվածը պահանջում է բյուջեի եկամուտների եւ ծախսերի փոփոխություն առաջացնող օրենքներն ընդունել ԱԺ ձայների մեծամասնությամբ 96 ձայն) օրենքի նախագիծը դրվեց քվեարկության եւ հավաքեց 45 «կողմ», 44 «դեմ», 26 «ձեռնպահ» ձայներ: Կարգադրի քվեարկեցին «Հանդիպումը» կողմ, «Շամիրամը» կողմ, կոմկուսը եւ «Բարեփոխումները» բացակա կամ ձեռնպահ, իսկ «Երկրապահը» մեծամասամբ կողմ սակայն դեմ եւ ձեռնպահ: Վարդան Խաչատրյանը քվեարկությունից առաջ զգացմունքային ելույթ ունեցավ, իր մեջ խիզախություն գտնելով տուրք չտալու ճնշմանը եւ քվեարկությունից չհանելու իր նախագիծը. «Բավական է սեւ սենյակներում կատուներ փնտրենք: Այս դահլիճում կերեւա, ո՞վ է սվերային, ո՞վ է հարկ տալիս, ով ոչ: Եթե հարկեր իջեցնելը միեւնույն է ձեռներեցների համար, ուրեմն նա հարկի մասին չի մտածում: Ոչ ոք թող չնեղանա, բայց քվեարկության արդյունքներով ես դիմելու եմ դատախազություն եւ ՆԳՆ՝ ստուգելու դեմ քվեարկած պատգամավորների գործունեությունը եւ հրապարակորեն տալու»:

Քվեարկությունից հետո դեմ քվեարկած ձեռներեցները սեղմում էին Վարդան Խաչատրյանի ձեռքը եւ համարում նրան օրվա հերոս, իրենք արդեն դեմ էին քվեարկել եւ հանգիստ էին: Այսօր ԱԺ-ն կբարունակի իր աշխատանքը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Թույլ չտանք արկածախնդրական եւ վրեժխնդրության դրսեւորումներ

Հետադարձ հայացք Առաջին Հանրապետությանը

«Ազգայնական ակումբը» օրերս լույս ընծայեց իր հերթական հրատարակությունը: «1918-21 թթ. հետադարձ հայացք» վերնագրված 27 էջանոց գրքույկը «նվիրվում է Հայկական պետականության վերականգնման 80-ամյակին» Այն բաղկացած է երկու մասից. առաջինը գրքույկի վերնագրով պատմական ինքնին բաժինն է, որ հրատարակիչ կազմակերպության նախագահ Մուշեղ Լալայանը նորովի վերլուծում է «Հայաստանի Առաջին Հանրապետության պարտությունը եւ Լեռնահայաստանի հաղթանակը»: Հեղինակը գտնում է, որ «հավանաբար, պայմանավորված խորհրդային պատմագիտության ազդեցությամբ... մի տեսակ սվերում են մնացել Բաք-Աղարանի եւ Ղարաբիլիսայի կռիվները...»: Նա եզրակացնում է. «ՀՀ-ն պարտվեց ազգային ոգու պակասից, իսկ Լեռնահայաստանը հաղթեց այդ ոգու դրսեւորման շնորհիվ»:

Գրքույկի երկրորդ մասը Զարհանդի՝ Բոստոնի «Հայրենիք» ամսագրի 1963 թ. 7-րդ համարում լույս տեսած ու պատշաճ ուշադրության չարժանացած մի կարեւոր հոդվածն է՝ «Հայաստանի Հանրապետությունը եւ անոր տեղը հայոց պատմության մէջ» վերնագրով, ուր հեղինակը աղացուցում է, որ 1918 թ. մայիսյան հերոսամարտերն ու հանրապետության ծնունդը կերտեցին բոլոր կուսակցությունները եւ բոլոր հայերը եւ ոչ թե ՀՅԴ-ն կամ արեւելահայերը միայն:

ԳԵՎՈՐԳ ՅԱՇՔԾՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սեփականաշնորհվող օբյեկտների լայն ընտրանի

Երեկ ՀՀ կառավարության նիստում որոշում կայացվեց մրցույթի կարգով մասնավորեցնել «Սելտրանս», Հրազդանի «Մինգա տրիկոտաժի ֆաբրիկա», «Երեւանի N 7 հացի գործարան» պետական փակ բաժնետիրական ընկերությունները, ինչպես նաեւ բաժանորդագրության միջոցով «Ավտովեգ», Արմավիրի «Տարոն», «Հայաստան-շինարար» փակ բաժնետիրական ընկերությունները:

Կառավարության այլ որոշմամբ նախատեսվում է սկսել «Երեւան հյուրանոց» ՓԲԸ, «Սպիտակի թռչնաֆաբրիկա» ՊՁ, «Արմինտուր» ՊՁ-ի «Ծիծեռնակ» դուստր ձեռնարկության, Երեւանի «Հայգորգ» ՓԲԸ եւ Վայոց Ձորի մարզպետարանի Ջերմուկ քաղաքի առողջարանի պետական գույքի միջազգային մրցույթով մասնավորեցման նախապատրաստական աշխատանքները, ստեղծելով համապատասխան մրցութային հանձնաժողով:

«ՀՀ պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թթ. ծրագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն նախատեսվում է պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարությունների օբյեկտների, սեփականաշնորհման եւ աղաղեսականացման ենթակա օբյեկտների ցանկում ընդգրկել Դիլիջանի «Իմպուլս», «Երեւանի ոսկերչական գործարան», «Աբովյանի բժշկական իրերի գործարան» եւ Երեւանի «Մետաքս» պետական ձեռնարկությունները, իսկ մշակույթի ընկերությունների եւ ձեռնարկությունների ցանկում՝ Երեւանի երիտասարդական պալատը:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Կեչառիսը եկեղեցուն՝ անհատույց, «Հայձուկ»-ի շենքը դաշնակներին՝ վարձով

Ինչպես տեղեկացնում է ՀՀ վարչապետի մամուլի ծառայությունը, երեկ կառավարության որոշմամբ Հայաստանյայց առաքելական եկեղեցուն սեփականության իրավունքով անհատույց հանձնվեց պետական սեփականություն հանդիսացող պատմության եւ մշակույթի հանրապետական նշանակության հուշարձան Կոտայքի մարզի Կեչառիսի համալիրը: Օրակարգում ընդգրկված այլ որոշման համաձայն Հայ հեղափոխական դաշնակցությունը կուսակցությանը վարձակալության կարգով հանձնվեց Երեւանի Հանրապետության փողոցի թիվ 30 շենքի գյուղատնտեսության նախարարության «Հայձուկ» ՓԲԸ զբաղեցրած տարածքը:

Ուժգին կարկտահարություն եւ ջրհեղեղ Նոյեմբերյանում

21 ՄԱՅԻՍ, «ԵՐԵՎԱՆ»: Մայիսի 20-ի երեկոյան, ժամը 19:20-ից, կես ժամ տեւողությամբ տեղացած կարկուտը եւ ջրհեղեղը մեծ վնասներ են պատճառել Նոյեմբերյանի շրջանի Ոսկեվան, Բաղանիս, Ջուջեվան, Կոթի եւ Բարեկամավան գյուղերին: Ոսկեվանում կարկուտը եւ սելավներն ամբողջությամբ ոչնչացրել են 120 հա հացահատիկի, 18,5 հա կարտոֆիլի, 8 հա բանջարեղենի ցանքատարածություն, 150 հա խոտհարք: Բաղանիսում լիովին վնասվել է 12 հա հացահատիկի, 10 հա կարտոֆիլի, 8 հա բանջարեղենի ցանքատարածություն, 22 հա պտղատու այգի, 30 հա խոտհարք: Ջուջեվանում կարկտահարությունն այնքան ուժգին եւ տեւական է եղել, որ հաջորդ օրվա առավոտյան կարկուտը դեռեւս չէր հալվել: Մայիսի 21-ի կեսօրվա դրությամբ նշված գյուղերի գյուղատնտեսարանների աշխատողներն այգիներում եւ ցանքատարածություններում ճշտում էին վնասվածքները:

Մայիսի վերջին Երեւանում կանցկացվի համահայկական հարցերի գիտաժողով

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայ օգնության միության նախաձեռնությամբ, Հայաստանում մայիսի 29-30-ը կանցկացվի համահայկական հարցերի գիտաժողով: Նրա երկօրյա նիստերում զեկուցումներ կլսվեն «Հայ օգնության միություն, Հայաստանի կանանց կազմակերպություններ եւ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները», «Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները», «Հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունները տնտեսական, գիտակրթական ու մշակութային ոլորտներում» եւ «Հայկական հարց ազգային գաղափարախոսությունը» թեմաների շուրջ: Գիտաժողովը կամփոփի ՀՕՄ-ի կենտրոնական վարչության ատենապետուհի Վ. Իսաջանյանը: Ի դեպ, գիտաժողովը հովանավորվել է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից:

Սկսվեց Արարատի ոսկու արտահանումը

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: First Dynasty Mines Ltd. արդյունահանող ձեռնարկությունը սույն թվականի մայիսի 20-ին հայտարարել է, թե սկսել է Արարատի հանքերից արդյունահանված ոսկու արտահանումը Հայաստանից:

Արտահանված 312 ունցիա ոսկին վերամշակման է ուղարկվել Մեծ Բրիտանիա, այնուհետեւ վաճառվել ԱՄՆ-ում կենտրոնացված Gerald Metals Inc. անդրազգային կորպորացիային:

Հայտարարության մեջ նշվում է, որ այսուհետեւ ամեն 2 շաբաթը մեկ Մեծ Բրիտանիա կարտահանվի 1000 ունցիա ոսկի:

Արարատի ոսկին արդյունահանվում է First Dynasty եւ «Հայոսկի» ձեռնարկությունների կողմից համատեղ:

Կապիտալ բոլոր ծախսերը հոգալուց հետո First Dynasty-ին կստանա եկամուտների 50 տոկոսը: Այս տարի ծրագիր կա Արարատի ոսկու հանքերի օգտագործման իրավունքը ամբողջությամբ վերցնել ձեռնարկության ձեռքը: Այդ մասին համաձայնություն է կայացվել դեռեւս 1997 թ. մայիսի 15-ին:

Մամուլի ասուլիս ՈԱԿ ղեկավարության հետ

Այսօր Թեհրանի կենտրոնի 2-րդ հարկում, ժամը 16:00-ին տեղի կունենա Ոամկավար Ազատական կուսակցության Կենտրոնական վարչության անդամների մամլո ասուլիսը:

Հրավիրվում են զանգվածային լրատվության միջոցները:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէնութիւն / հեռ. 562863
Համակարգչային
ծառայութիւն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն
վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԶՀ

Առաջին Հանրապետության 80-ամյակը կնշվի ոչ միայն Սարդարապատում

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Սարդարապատի հերոսամարտի եւ Հայաստանի Առաջին Հանրապետության 80-ամյա հոբելյանը նշվելու է ոչոչես Սարդարապատի հուշահամալիրում, այնպես էլ 1918 թ.-ի մայիսյան մարտերի մյուս վայրերում՝ Ջավախքում, Աղարանում, Վանաձորում: Այս մասին մայիսի 21-ին լրագրողներին հայտնեց ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, 1918 թ.-ի մայիսյան հերոսամարտի տարեդարձի տոնակատարության նախապատրաստությամբ զբաղվող շտաբի ղեկավար, գեներալ-մայոր Սերգեյ Մարտիրոսյանը:

Սարդարապատի հերոսամարտի եւ Հայաստանի Առաջին Հանրապետության 80-ամյա հոբելյանի առթիվ Սարդարապատի հուշահամալիրի գլխավոր հրապարակում տեղի է ունենալու զինվորական շքերթ՝ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի բանակների 12 վաշտերի մասնակցությամբ, իսկ թատերականացված միջոցառումներին մասնակցելու են հանրապետության մոտ 2500 արվեստի գործիչներ: Թատերականացված միջոցառումների եւ համերգների ռեժիսորն է Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի տնօրեն Լաերտ Մովսիսյանը:

Հանդիսությունների մասնակիցները մայիսի 28-ին կայցելեն 1918 թ. Հայոց Ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանի շիրմին, կմասնակցեն նաեւ Սոսե Մայրիկի ածյունը եռաբլուրում ամփոփելու հանդիսավոր արարողությանը: Հայաստանում ՈՂ դեսպանը եւ հանրապետության տարածքում տեղակայված ռուսական զորքերի ներկայացուցիչները հարգանքի տուրք կմատուցեն 1918 թ. Սարդարապատի ճակատամարտում զոհված եւ Արշալույս գյուղի եկեղեցու բակում թաղված հայ զինվոր Ստեփան Ալոյանի եւ ռուս զինվորի գերեզմանին:

ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդականի խոսքերով, հանդիսություններին ըստ արժանվույնս կմեծարվեն Հայաստանի 90 տարեկան եւ ավելի տարիքի հաղթաթղթերը (թվով 4387 հոգի, որոնցից 278-ը՝ 100-ն անց), որոնք, փաստորեն, 1918 թ.-ի մայիսյան մարտերի ականատեսներն են:

Նշվեց նաեւ, որ տոնակատարություններին մասնակցելու համար արդեն ԱՄՆ-ից երեւան են ժամանել Առաջին Հանրապետության հայտնի ռազմական գործիչ Դրաստամատ Կանայանի թոռնուհին եւ հանդիսատես հանդիսացել Ռուսաստանի քաղաքական եւ բարոյական հենարանը Կովկասի տարածաշրջանում: Հայաստանի քաղաքական կշիռը պայմանավորված է հենց Կովկասի «ռազմավարական արժեքով» եւ հանի դեռ տարածաշրջանը Ռուսաստանի հետաքրքրությունների կենտրոնում է. Մոսկվան կամովին չի հեռանա Հայաստանից: Քանի դեռ միակ հյուրանոցով եւ մանր շինություններով: Զրոսաշրջիկները անցնելով պատմական պարիսպը դանդաղ քայլում էին մատուռից մատուռ:

Լրագրողների նման ուղեւորությանը նախորդեց հանդիսավոր շքերթ Գյումրիի ջոկատի կենտրոնական տարածքում՝ հիմնադրման 74-րդ տարելիցի առթիվ եւ նոր 22 բնակարանանոց շենքի բացումը: Կովկասյան հատուկ օկրուգի «Հայաստան» զորախումբը, որը պատշաճում է երկու երկրների շահերը՝ մեր հանրապետության արեւմտյան եւ հարավային սահմանները: Նման հաջորդականությունը վավերացվում է պատմությամբ եւ պատահական չէ, որ ներկայումս տեղակայված անձնակազմը իրեն համարում է խորհրդային, ինչպես նաեւ կայսերական Ռուսաստանի բանակի իրավահաջորդը:

1924-ի մայիսի 20-ին ձեւավորվեց Լենինականի (այսօր աղեն Գյումրիի) սահմանապահ ջոկատը: Հիմնադրման 74-ամյակի կապակցությամբ ջոկատի հրամանատարությունը հրավիրեց հայ լրագրողների, որոնց ընձեռվեց բացառիկ առիթ լինել Ախուրյան գետի ափին, ընդամենը 100 մետր հեռավորությունից դիտել Անիի ավերակները: Ուղեկալի տարածքում տեղակայված է երկուսիս մի «գյուղ» խարկով անունով: Գյուղի ճիշտ դիմացը, Անիի ավերակների եւ պատմական պարսպի ետեւում երեւում էր նույնանուն (Անի բուրգական արտասանությամբ) քաղաքաշիշ ավանը իր հայաստանցի բնակիչը եւ քաղաքական գործիչը ամենատարբեր մակարդակներում, եղածների մեջ, առավել վստահում է Ռուսաստանին, ապա վերջինիս դիրքերն այստեղ կայուն են: Ընդ որում սա գլոբալ քաղաքականություն է եւ կաղված չէ հեղաշրջումների, հեղափոխությունների, հասարակարգերի փոփոխության հետ: Կայսերական Ռուսաստանի տապալմանը հաջորդեց խորհրդային բանակի էջը Հայաստան: Խորհրդային հասարակարգի վերացումը նույնպես չհանգեցրեց ռուս զինվորի հեռացմանը: Այսօր Հայաստանում տեղակայված է Կովկասյան հատուկ օկրուգի «Հայաստան» զորախումբը, որը պատշաճում է երկու երկրների շահերը՝ մեր հանրապետության արեւմտյան եւ հարավային սահմանները: Նման հաջորդականությունը վավերացվում է պատմությամբ եւ պատահական չէ, որ ներկայումս տեղակայված անձնակազմը իրեն համարում է խորհրդային, ինչպես նաեւ կայսերական Ռուսաստանի բանակի իրավահաջորդը:

1924-ի մայիսի 20-ին ձեւավորվեց Լենինականի (այսօր աղեն Գյումրիի) սահմանապահ ջոկատը: Հիմնադրման 74-ամյակի կապակցությամբ ջոկատի հրամանատարությունը հրավիրեց հայ լրագրողների, որոնց ընձեռվեց բացառիկ առիթ լինել Ախուրյան գետի ափին, ընդամենը 100 մետր հեռավորությունից դիտել Անիի ավերակները: Ուղեկալի տարածքում տեղակայված է երկուսիս մի «գյուղ» խարկով անունով: Գյուղի ճիշտ դիմացը, Անիի ավերակների եւ պատմական պարսպի ետեւում երեւում էր նույնանուն (Անի բուրգական արտասանությամբ) քաղաքաշիշ ավանը իր

ՍԱՀՄԱՆԱՊԱՀ

Եվգենի Պոտեխին. «Սահմանը փակի տակ է, եւ բանալիները մեզ մոտ են»

հայաստանցի բնակիչը եւ քաղաքական գործիչը ամենատարբեր մակարդակներում, եղածների մեջ, առավել վստահում է Ռուսաստանին, ապա վերջինիս դիրքերն այստեղ կայուն են: Ընդ որում սա գլոբալ քաղաքականություն է եւ կաղված չէ հեղաշրջումների, հեղափոխությունների, հասարակարգերի փոփոխության հետ: Կայսերական Ռուսաստանի տապալմանը հաջորդեց խորհրդային բանակի էջը Հայաստան: Խորհրդային հասարակարգի վերացումը նույնպես չհանգեցրեց ռուս զինվորի հեռացմանը: Այսօր Հայաստանում տեղակայված է Կովկասյան հատուկ օկրուգի «Հայաստան» զորախումբը, որը պատշաճում է երկու երկրների շահերը՝ մեր հանրապետության արեւմտյան եւ հարավային սահմանները: Նման հաջորդականությունը վավերացվում է պատմությամբ եւ պատահական չէ, որ ներկայումս տեղակայված անձնակազմը իրեն համարում է խորհրդային, ինչպես նաեւ կայսերական Ռուսաստանի բանակի իրավահաջորդը:

1924-ի մայիսի 20-ին ձեւավորվեց Լենինականի (այսօր աղեն Գյումրիի) սահմանապահ ջոկատը: Հիմնադրման 74-ամյակի կապակցությամբ ջոկատի հրամանատարությունը հրավիրեց հայ լրագրողների, որոնց ընձեռվեց բացառիկ առիթ լինել Ախուրյան գետի ափին, ընդամենը 100 մետր հեռավորությունից դիտել Անիի ավերակները: Ուղեկալի տարածքում տեղակայված է երկուսիս մի «գյուղ» խարկով անունով: Գյուղի ճիշտ դիմացը, Անիի ավերակների եւ պատմական պարսպի ետեւում երեւում էր նույնանուն (Անի բուրգական արտասանությամբ) քաղաքաշիշ ավանը իր

Դեռ XIX դարի սկզբից հատկապես Հայաստանն է հանդիսացել Ռուսաստանի քաղաքական եւ բարոյական հենարանը Կովկասի տարածաշրջանում: Հայաստանի քաղաքական կշիռը պայմանավորված է հենց Կովկասի «ռազմավարական արժեքով» եւ հանի դեռ տարածաշրջանը Ռուսաստանի հետաքրքրությունների կենտրոնում է. Մոսկվան կամովին չի հեռանա Հայաստանից: Քանի դեռ միակ հյուրանոցով եւ մանր շինություններով: Զրոսաշրջիկները անցնելով պատմական պարսպի դանդաղ քայլում էին մատուռից մատուռ:

Լրագրողների նման ուղեւորությանը նախորդեց հանդիսավոր շքերթ Գյումրիի ջոկատի կենտրոնական տարածքում՝ հիմնադրման 74-րդ տարելիցի առթիվ եւ նոր 22 բնակարանանոց շենքի բացումը: Կովկասյան հատուկ օկրուգի

1997-ին Արտաշատի եւ Արարատի ուղղությամբ իրականացված կրակոցների վերաբերյալ գեներալ Պոտեխինն ասաց. «Թուրքերն իրենց զինվորներին հրահանգել էին կրակել այնտեղ, որտեղից ադմուկ է լսվում: Սա կաղված էր քուրդ անջատողականների գործունեության հետ: Հայաստանի ուղղությամբ կատարված կրակոցները նպատակային չէին: Պարզապես գիշերով, որոշ զինվորներ ճիշտ չէին կողմնորոշվել, դրանք ընթացան այլ ուղղությամբ»:

Գյումրիի սահմանապահ ջոկատը պահպանում է ՀՀ-ի Թուրքիայի հետ սահմանի 85 կիլոմետրանոց հատվածը: Մայիսի 28-ին ջոկատը (այլ ջոկատների հետ) նշելու է իր տոնը: Սահմանապահ զորքերի հիմնադրման օրը: Երեւի թե սա խորհրդանշական զուգադիպություն է:

ԱՐԹՈՒՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Պաշտպանության նախարարության ներկայացուցիչների երկխոսությունը լրագրողների հետ

Երեկ Սոչայի տանը տեղի ունեցավ ՀՀ պաշտպանության նախարարության լրատվության եւ քարոզչության վարչության պետ Էդիկ Միլիոնյանի եւ վարչության աշխատակիցներ Ռաֆիկ Այդինյանի եւ Պետրոս Դեմիրճյանի հերթական աշխատանքային հանդիպումը զանգվածային լրատվամիջոցների հատկապես բանակի թեմաներով գրող լրագրողների հետ: Նախարարության ներկայացուցիչները մեկ անգամ եւս լրագրողների ուշադրությունը հրավիրեցին մամուլում ռազմական գաղտնիքների սպրդումների փաստերի վրա: Բերեցին օրինակներ հրապարակումներից, որ լրագրողները, իհարկե, ամենեին ոչ չարամիտ դիտավորությամբ, այլ ամենայն հավանականությամբ, իմացության պակասի պատճառով նշել են ոչ միայն մեր բանակի այս կամ այն զորամասի կամ ստորաբաժանման գտնվելու վայրը, այլեւ զինվորների թվաքանակը, սպառազինության տեսակը: Հասկանալի է, որ այդպիսի տեղեկություններն անգնահատելի գանձ են... հակառակորդի հետախուզության համար:

Սկզբունքային խոսակցություն ծավալվեց բանակային ծառայության հեղինակության բարձրացման, նախազորակոչային տարիքի երիտասարդության կրթության, առողջության պահպանման, ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրների լուծման, դրանցում տեղ գտած բերությունների վերացման, ինչպես նաեւ բուն բանակում նկատվող բացասական երեւույթների օրյեկտիվ լուսաբանման հարցերի շուրջ: Պրն Միլիոնյանը կրկին ընդգծեց, որ պաշտպանության նախարարության ղեկավարությունը, անձամբ նախարար Վազգեն Սարգսյանը խիստ շահագրգռված է բանակ-հասարակություն կապերն ամրապնդելու, բանակային կյանքի անցուդարձը հասարակության համար թափանցիկ դարձնելու խնդրով եւ այդ հարցում ակնկալում է լրագրողների աջակցությունը:

Վերջում պրն Միլիոնյանը պաշտպանության նախարարությունում հավատարմագրված մի խումբ լրագրողների հանձնեց վկայականներ՝ չմոռանալով տեղյակ պահել, որ նախորդ տարիների նման այս տարի եւս նախարարությունը մրցանակաբաշխություն է անցկացնելու բանակային կյանքը լուսաբանող լրագրողների շրջանում, որի համար սահմանված են հատուկ մրցանակներ:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Սիդա Թոփուզյանը՝ կրթության փոխնախարար

Եթե կառավարության վերին էշելոնում կանայք չկան, ապա վարչական հիերարխիայի հաջորդ օղակները սկսում են համալրվել կանանցով: ՀՀ կառավարության մայիսի 20-ի թիվ 264 որոշմամբ, օրինակ, կրթության եւ գիտության փոխնախարար է նշանակվել «Կին ընտրողների լիգայի» նախագահ, մանկավարժական գիտությունների թեկնածու Սիդա Թոփուզյանը, որի «արհեստավարժությունը» տվյալ պրոցում, երեւի թե, անկասկած է: Ինչպես տեղեկացնում են նախարարության լրատվական ծառայությունից, տկն Թոփուզյանն ավարտել է ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետը, 1983-85 թթ. ղեկավարել ՀԼԿԵՄ-ը, 1985-88 թթ. աշխատել կոմկուսի Երեւանի քաղկոմի երկրորդ քարտուղարի, 1988-91 թթ. ՀԽՍՀ ժողկրթության փոխնախարարի պաշտոնում: 1991-ից Բրյուսովի անվ. օտար լեզուների ինստիտուտի ավագ դասախոս է, մանկավարժական եւ հոգեբանական հոդվածների հեղինակ:

Ահազանգերի հետեւով

ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունից հայտնում են, որ ի պատասխան դպրոցներում ավարտական վկայականների հանձնման պատրվակով ապօրինի հավաքվող գումարների մասին նախարարությանը տեղեկացնելու հորդորի, ստացվել են բազմաթիվ ահազանգեր: Ստուգումների արդյունքներով քաղաքաթեստարանի կրթության վարչության հետ համատեղ կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ, հավաստում է նախարարության լրատվական ծառայությունը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Տուժած ավանդատուների «շրջափակումը» շարունակվո՞ւմ է

Կողոպտված ավանդատուները, նախկին իշխանությունների օրոք իրենց կորած ավանդները ետ ստանալու համար տեւականորեն, բայց իզուր պայքարելուց հետո միավորվել են «Ավանդատուների միություն» հասարակական կազմակերպության մեջ՝ հին իշխանություններից չստացածը նորերից «վերցնելու» նպատակով: Կազմակերպության կենտրոնական խորհուրդը, «հետահայաց ճնշության ենթարկելով անցնող վեց տարիների ընթացքում Հայաստանի առեւտրային բանկերում եւ գրավատներում տիրող իրավիճակը», հայտարարությամբ դիմել է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, Աժ նախագահ Խոսրով Հարությունյանին եւ վարչապետ Արմեն Դարբինյանին:

Կողոպտված ավանդատուներին համարելով հիշական գործիչների վնասարար գործողությունների, պետական բարձրաստիճան այրերի հատուկ ծրագրով կազմակերպված զանգվածային խաբեության զոհը եւ, ենթադրելով «ավանդատուների հիմնահարցին ծաղրանքով եւ արհամարհանքով վերաբերվելու» նախկին իշխանությունների կեցվածքը, իրավական պետության համար անհարիր են գտնում անտարբերությունը բվառության մեջ, սոցիալական աղետի պայմաններում ապրող ժողովրդի վիճակի նկատմամբ:

«Այսօր ասպարեզից հեռացված է հակաժողովրդական հրեավոր իշխանությունը: Այժմ, հրաժեշտ տալով նրանց, արդյունքում ունեցանք ավելի մեծ շրջափակում, քան ԼՏՊ-ի օրոք», գրում են հայտարարության հեղինակները՝ հիասթափություն հայտնելով, որ Աժ դահլիճ ներկայացված կառավարության ծրագրում արծարծված չէր ավանդատուների խնդիրը: «Ժամանակն է ճիշտ եզրահանգումների գալ եւ հիմնավոր քայլեր կատարել նախկին իշխանությունների մեղքով փոխարինված ավանդատուների վնասները վերականգնելու ուղղությամբ: Դրա համար պարտադիր չէ կառչել բյուջեի հնարավորություններից: Կան հիմնախնդրի լուծման բազմաթիվ եւ տարաբնույթ աղբյուրներ ու ձեւեր: Պետության աջակցությամբ պետք է ճշտել կողոպտված ավանդների ռեալ պատկերը եւ որոշել քայլերի հաջորդականությունը», ասվում է հայտարարության մեջ: Ժողովրդի տառապանքին եւ պետության նկատմամբ խորնիկական անվստահությանը վերջ տալու, ավանդների մարման գործնական նկատառումներ մշակելու համար անհրաժեշտ է, որ հանրապետության ղեկավարությունն անմիջական երկխոսություն սկսի խնդրին լավատեղյակ մարդկանց հետ, եզրակացնում են հայտարարության հեղինակները:

Լ. Պ.



ԵԿԵՂԵՑԻ

Օշական եպս. Չոլոյանը՝ ԱՄՆ-ի Արեւելյան թեմի անթիլիասական թեւի առաջնորդ

Կանադայի եւ Ամերիկայի Հայաստանյայց եկեղեցու Արեւելյան թեմի անթիլիասական թեւի առաջնորդ է ընտրվել եպիսկոպոս Օշական Չոլոյանը Քուվեյթից: Նա փոխարինում է Մեսրոպ արք. Աճեմյանին, որը երեք անգամ այդ պաշտոնում վերընտրվելուց հետո վերջերս հայտարարել է, որ հեռանում է ասպարեզից եւ Ս. Էջմիածնում զբաղվելու է Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի տոնակատարությունների ծրագրերի մշակման գործերով: Այս մասին է հաղորդել «Արմինյոն Միրոր Սիեֆթեյթր» շաբաթաթերթն իր մայիսի 9-ի համարում, ավելացնելով, որ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսի կողմից այդ պաշտոնի համար ներկայացվել էր 3 թեկնածու: Մյուս երկուսը եղել են Խաժակ եպիսկոպոս Հակոբյանը, որն իր թեկնածությունը հանել է նախքան քվեարկությունը, եւ Հայր Անուշավան Դանիելյանը: Քվեարկության արդյունքները, որոնցում Չոլոյանը ստացել է 62 ձայն, իսկ Դանիելյանը՝ 31, փոխանցվել են Արամ Ա կաթողիկոսին, որն էլ վավերացրել է դրանք:

Նորընտիր առաջնորդը ծնվել է Հալեպում 1947-ին: Նախնական կրթությունը ստացել է Հայկազյան դպրոցում: 1960-ին ընդունվել է Կիլիկյան աթոռի ճեմարան: Տեղադրվել է ձեռնադրվել 1964-ին եւ քահանա 1967-ին՝ ձեռամբ Գարեգին եպիսկոպոս Սարգսյանի (այժմ Գարեգին Ա կաթողիկոս Ամենայն հայոց), իսկ 1994-ին՝ եպիսկոպոս: Բեյրութի ամերիկյան համալսարանում մասնագիտացել է պատմագիտության ասպարեզում: Դասավանդել է ինչպես ճեմարանում, այնպես էլ Բեյրութի Մարտիկյան եւ Հալեպի Սահակյան Ազգային վարժարանում:

1980-ից Քուվեյթի եւ Արաբական էմիրությունների թեմի առաջնորդն է եղել: Աշխատել է Կիլիկյան աթոռի պատշաճաթերթ «Հասկ» եւ ճեմարանի «Գլաձոր» պարբերականներում: 1979-ից Միջին Արեւելքի եկեղեցիների խորհրդի գործադիր կոմիտեի անդամ է: Մասնակցել է առաջինից տասներորդ դասարանցիների համար կրոնական դասագրքերի կազմմանը: Քուվեյթում պաշտոնավարած տարիներին «փայլել» է կուսակցականությամբ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հակադարձություն

Այս տարվա մայիսի 14-ին Մոսկվայում լույս տեսնող «Օբշայա գազետան» դասական ակնարկ հրապարակեց «Զգույշ, դռները փակվում են: Հաջորդ կայարան չի լինի: Ադրբեջանի Գերագույն դասարանը ննեց Բաքվի մետրոյի պայթեցման գործը» ծավալուն վերնագրով: Ինչպես հայտնի դարձավ հրապարակումից, ահաբեկչական ֆայլն իրականացրած ոմն Ա. Ասլանովը ժամանակին իբր կոնտուզիայի է ենթարկվել Ղարաբաղի ռազմաճակատի Ֆիզուլու հատվածում եւ գերի ընկել անգիտակից վիճակում: Սա արդեն առաջին ողողկված սուտն է: Հենց նույն օրը, երբ Ա. Ասլանովը կամովին գերի հանձնվեց ավտոմատը ձեռքին, այնտեղ էր գտնվում գրող Զորի Բալայանը, որն այդ օրերին ռազմաճակատից կանոնավոր կերպով ռեպորտաժներ էր ուղարկում մեր թերթի համար: Եվ գերի հանձնված Ասլանովի հետ կայացած զրույցն առաջին անգամ հրապարակվեց «Ազգում»: Հետագայում, ինչպես հայտնի է, «Ազգի» հրապարակումների հիման վրա հեղինակը գրեց «Դժոխք եւ դրախտ» գիրքը, որը լույս տեսավ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն: Բոլոր հրատարակություններում զետեղված էր ձախորդ գերու հետ կայացած զրույցի տեքստը, որը դատելով ըստ ամենայնի, ավելի քան հարմար ընտրություն դարձավ մետրոյում կատարված ահաբեկչական ֆայլը նրան վերագրելու համար: Ազգությամբ լեզգի Ասլանովը լավ է խոսում ռուսերեն, նշանակում է Հայաստանի հատուկ ծառայությունների համար հետաքրքիր եւ հարմար է նրան հավատագրելը: Բացի դրանից, նա հանդիպել է «անձամբ» Բալայանի, կամ, ինչպես գրում է դասական ակնարկի հեղինակը, այն մարդու հետ, «որի մասին լսել էր իր հանրապետությունում»: Պարզվում է, լոկ այդ փաստը բավարար է եղել, որպեսզի «հայկական ծառայությունների աշխատակիցները» հայ գրողի հետ համատեղ նախկին ռազմագերուն նախապատրաստեին Բաքվի մետրոյում պայթեցում, կատարելուն (անհասկանալի է, թե ինչո՞ւ օբյեկտ ընտրվեց որեւէ մեկին չհետաքրքրող մետրոն եւ ոչ թե որեւէ կարեւոր ռազմավարական օբյեկտ):

Դժվար չէ գուշակել, թե ում եւ ինչի համար էր հարկավոր բավական անշնորհք ծրագրված այդ սադրանքը, եւ այդ սադրանքի հիման վրա Ադրբեջանի Գերագույն դասարանը քրեական գործ է հարուցում Հայաստանի հատուկ ծառայությունների մի շարք աշխատակիցների, ինչպես նաեւ գրող ու հրապարակախոս Զորի Բալայանի դեմ նրանց կասկածելով Բաքվի մետրոյի պայթեցման նախապատրաստմանն ու իրականացմանը մեղսակից լինելու մեջ:

«Ազգը» ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում Զորի Բալայանի եւ Հայաստանի ազգային անվտանգության նախարարության մամլո ծառայության պատասխանների լրիվ տեքստը, որոնք հրապարակվել են 1998 թ. մայիսի 21-ին նույն «Օբշայա գազետայում»:

Ես մեղավոր եմ լոկ այն բանում, որ սիրում եմ հայրենիքս

Բաքվի մետրոյի պայթեցմանը իմ իբր մեղսակից լինելու վերաբերյալ հնչած մեղադրանքներն ապացուցում են Ադրբեջանի հատուկ ծառայությունների երեւակայության ինչ-որ զարմանալի թռիչքով: Այդ սադրանքի ակունքները պարզելու համար ստիպված եմ փոքր-ինչ խորանալ ոչ վաղեմի պատմության մեջ:

1992 թ. ամառը շատ թեժ էր Արցախում (Ղարաբաղում): Ադրբեջանի ղեկավարությունը, օգտագործելով այն ժամանակ դեռ լրիվ չկազմացրված ԽՍՀՄ 4-րդ բանակի վիթխարի ներուժը, մասնավորապես օդուժը, հրթռակայանները, հեռահար հրանոթները (այդ թվում կասետային նավատորմի ռազմանավերից բերված հրետանին), տանկերը, զրահատեխնիկան, կարողացավ զավթել ամբողջ Շահումյանի շրջանը եւ Ղարաբաղի Մարտակերտի ու Հադրութի շրջանների մեծ մասը: Օդից անդադար ռմբակոծում էին մայրաքաղաք Ստեփանակերտը եւ ոչ միայն Արցախի, այլեւ Հայաստանի Հանրապետության մյուս բնակավայրերը:

Այդ ժամանակ առավոտից երեկո ես խրամատներում էի: Դա հայրենիքի որդու, հայ գրողի եւ իրավապաշտպանի պարտքն էր: Ես երեւի ամենատարեցն էի Ղարաբաղի ռազմաճակատի խրամատներում: Պատահական չէ, որ ուշադրություն եմ հրավիրում դրա վրա: Բանն այն է, որ ես վաղուց անհերքելի փաստեր եմ հավաքում մարդկության դեմ ուղղված ամենահրեշավոր հանցագործություններից մեկի՝ Ադրբեջանական ԽՍՀ հայերի էթնիկական զտման վերաբերյալ: Քանիցս հանդես եմ եկել մամուլում, գրել գրքեր, վկայակոչել Նախիջեւանում, Ղարաբաղում եւ Ադրբեջանական ԽՍՀ մյուս հայկական պատմական մարզերում մարդու իրավունքների զանգվածային խախտումները հաստատող վավերագրեր: Դա, իհարկե, ինձ չէր ներվում: Եվ ես Բաքվի զանգվածային լրատվության միջոցների հարձակումների թիրախը դարձա:

1994 թ. հունվարին, երբ սկսվեց պատերազմի հերթական փուլը, խմբերով գերի էին հանձնվում ադրբեջանցի զինվորներ ու սպաներ, աֆղան մոջահեդներ, մեծ մասամբ՝ Կարյագինոյի (Ֆիզուլու) հատվածում: Գերիներից շատերի հետ ինձ վիճակվել է զրուցել: Ոմանց մասին գրել եմ թերթերում, նշել նրանց անունները, ընթերցողներին ծանոթացրել զրույցների սղագրություններին: Դիմել եմ Հաագայի դատարանին: Հայ բնակչության դեմ Ադրբեջանի ղեկավարների կատարած հանցագործությունների վերաբերյալ մերկացնող նյութեր եմ ուղարկել ժնեւ՝ ՀԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովին: Դատ եմ պահանջել 1993-94 թթ. ծմռանը Մարտակերտի, Աղդամի, Կարյագինոյի (Ֆիզուլու) եւ Օմարի հատվածներում սպանդների կազմակերպիչների նկատմամբ:

Ես մերկացնում էի, Բաքուն պախարակում էր ինձ: Վերհիշենք թեկուզ Հայաստանին իբր ռուսական ռազմական տեխնիկայի վաճառքի շուրջը բարձրացված տիեզերական աղմուկը: Ճիշտ է, Ադրբեջանի պաշտոնական քարոզչությունը համառորեն լռության էր մատնում մոսկովյան մամուլում իմ հրապարակած տվյալները, թե փլուզումից հետո որքա՞ն զենք է բաժին ընկել Հայաստանին եւ Ադրբեջանին: Ըստ էության, ի՞նչ կարելի է պատասխանել, եթե ես վկայակոչել էի պաշտոնական աղբյուր: Օրինակ, մեզ եւ Ադրբեջանին բաժին են ընկել համապատասխանաբար 44 եւ 350 զրահամեքենա, զոր եւ 42 C-200 համալիր, 3 եւ 70 C-75 համալիր, 6 եւ 70 ռազմօդանավ, 154 եւ 330 տանկ: Բացի դրանից, Ադրբեջանն Ուկրաինայից ստացել է 150 տանկ, 150 հետեւակի մարտամեքենա, մեծ թվով ռազմօդանավեր, «Մթերչ» եւ «Ուրագան» հակաօդակարգեր:

Հենց 94-ի հունվարին գերի ընկավ դասական ակնարկի գլխավոր հերոս Ասլանովը, որը, Ադրբեջանի Գերագույն դատարանի դատավճռի համաձայն, 1994 թ. հուլիսի 3-ին պայթեցում է կազմակերպել Բաքվի մետրոյում: Այո, ի թիվս բազմաթիվ գերիների, որոնց հետ ես հանդիպել եմ որպես գրող ու հրապարակախոս, եղել է նաեւ Ասլանովը (ի դեպ, նա իրեն անվանում էր ոչ թե Ազեր, ինչպես նշվում է ակնարկում, այլ Ազերի): Հոդվածում այն պնդումն է արվում, թե ես հյուրանոցում Ասլանովին այցելել եմ «Հայաստանի հատուկ ծառայությունների աշխատակիցների ուղեկցությամբ» (ո՞ր հյուրանոցի մասին է խոսքը): Ասված իմ, որպիսի անմտություն. «աշխատակիցները» գրողին ուղեկցում են այն մարդու մոտ, որին մատնություն էին հատուն առաջադրանք տալ: Ով-ով, բայց այդ մարդիկ լավ գիտեն, որ գրողները չգրողներից տարբերվում են նրանով, որ կարող են մեկ էլ տեսար հրապարակել այն, ինչը, վերջիններիս կարծիքով, բնավ չի կարելի հրապարակել:

Ես այնքան էլ վստահ չեմ, թե դասական ակնարկի հեղինակն ինքը հավատում է Ազերի Ասլանովի այն խոսքերին, թե ես եւ Դաղստանի խորհրդարանի պատգամավորը իբր ռազմագերու եւ Հայաստանի հատուկ ծառայությունների աշխատակիցների ներկայությամբ «մեկ-երկու խոսք» ենք փոխանակել, որից «պարզ դարձավ, որ կողմերը պայմանավորվում են նավթի ու նավթամթերքի դիմաց Հայաստանից Դաղստան զենք ու զինամթերք առաքելու մասին»: Եվ այդ ամենը, կրկնում եմ, գերու ներկայությամբ, որը «այդ ամենը» ապագա դատավարության համար արձանագրել է «մեկ-երկու խոսքի» միջոցով: Եվ ռուսատանցի (տվյալ դեպքում ռուս) ընթերցողի վրա առավել ուժգին տպավորություն գործելու նպատակով հեղինակը զենքի հետ կապված շաղակրատանքն ավարտում է հետեւյալ ճամարտակությամբ. «Արդյոք այդ զենքը չէ՞ր, որ ավելի ուշ Չեչնիայում կրակում էր ռուսատանցի երիտասարդների վրա»: Ի դեպ, թե Չեչնիայում ում զենքն էր կրակում ռուսատանցի երիտասարդների վրա, խոստովանեց ինքը՝ Շամիլ Բասաեւը ադրբեջանական «Թուրան» գործակալությանը. «Չեչենները չեն մոռանում ոչ լավը, ոչ էլ վատը: Չեչնիայի ու Ռուսատանի պատերազմի ընթացքում Ադրբեջանը Չեչնիային անգնահատելի օգնություն ցույց տվեց, իրեն չպահեց որոշ երկրների ու ժողովուրդների պես, որոնք ձգտում են հաճոյանալ Ռուսատանին եւ ամեն ինչում համաձայնել Մոսկվայի հետ: Ադրբեջանը կարող է հուսալ պատասխան օգնություն»: Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են: Իսկ ինչ վերաբերում է հյուրանոցում գերի Ազերի Ասլանովի ներկայությամբ դաղստանցի պատգամավորի հետ իմ խոսակցությանը, դա միանգամայն անհերեւակայելի է, քանզի իրականում նման հանդիպում չի եղել: Եղել է այլ բան. Ադրբեջանի հատուկ ծառայությունները մտահղացել են միաժամանակ պայթյունի ալիքով ծածկել հայ գրողին:

Որպես բժիշկ ես լավ եմ հասկանում խեղճ Ասլանովին: Նա պարտավոր էր ազնվորեն խաղալ իր համար գրված դերը: Պատահական չէ, որ Ադրբեջանի զանգվածային լրատվության միջոցները ասես պայմանավորվելով հատուկ ուշադրություն են դարձրել իր անձին: Ակնարկների ու ռեպորտաժների հեղինակներն անկասկած չգիտեին, որ ես վաղուց հրապարակել եմ Ազերի Ասլանովի հետ իմ զրույցի տեքստը: 1994 թ. ամռանը (ինչպես այժմ պարզվում է, հենց այն ժամանակ, երբ Ասլանովն իբր ահաբեկչական ֆայլ է կատարել Բաքվի մետրոյում) ես առաջին անգամ ապագա գրքից գլուխներ հրապարակեցի «Ազգ» թերթում: Այնուհետեւ տեքստն առանց փոփոխության զետեղվեց ռուսերեն լույս տեսած «Դժոխքի ու դրախտի միջեւ» գրքում: Որոշ ժամանակ անց լույս տեսավ գրքի հայերեն տարբերակը, իսկ անցյալ տարի լույս տեսավ անգլերեն: Արդեն նարո՞ւ էի ես արդյոք մի կողմից գերուն առաջարկել ահաբեկչական ֆայլ կատարել Բաքվում, իսկ մյուս կողմից այդքան անհեթեթ կերպով մատնել ինձ:

Պատկերացրեք, թե սկզբում (ըստ «Օբշայա գազետայի» հոդվածի) ապագա ահաբեկչին ասում եմ. «Հիմա դու մինչեւ վերջ մերն ես, կկատարես մեր առաջադրանքները», եւ դրանից հետո ընթերցողին (մոսկովյան, երեւանյան եւ լոնդոնյան) պատմում եմ մեր հանդիպման մասին: Դե, զոռով սիրելի չես դառնա: Ես դուր չեմ գալիս Բաքվին, բայց ի՞նչ կարիք կա ինձ ապուշի տեղ դնելու:

Ընթերցողի ուշադրությանն եմ ներկայացնում լրիվ տեքստն առանց կրճատումների, որը հրապարակվել է «Դժոխքի ու դրախտի միջեւ» գրքում (հրատարակված է Մոսկվայում, 1995 թ.).

«Գումարակի հրամանատար գերի Ազերի Ասլանով. 26 տարեկան: Ամուսնացած է, ունի երկու դուստր: Ֆիզուլու մոտերքում մոլորվել է մառախուղի մեջ: Տարօրինակ է հնչում. գումարակի հրամանատարը մոլորվել է ավտոմատը ձեռքին: Դե լավ: Դա չէ կարեւորը: Ազերի Ասլանովը նման չէր մյուս գերիներին, իր հայրենակիցներին: Ճիշտ է, եթե խորհենք, Ադրբեջանի համար վիճելի շատ բան կա հենց «հայրենակից» տերմինի մեջ: Չէ՞ որ այստեղ, ռուսական պետության տարածքում, որը ներառել է պատմական Հայաստանի մի մասը, դարերով ապրել են հայեր, ռուսներ, պարսիկներ, թաթիներ, հույներ, թաթեր, քրդեր, կովկասյան լեզգիներ, ավարներ: Հետագայում հայտնվել են փոքր բուրական ցեղեր: Նման էթնիկական խճանկարի պայմաններում բոլշեւիկները հիմնեցին արհեստական, ինչպես պատմաբաններն են պատմում, «բուֆերային» հանրապետություն, որպեսզի Խորհրդային Ռուսատանից դեպի Արեւելք կամուրջ գցեն «հեղափոխության արտահանման» համար: Եվ հանրապետությունն անվանեցին Ադրբեջան, իսկ բոլոր ոչ հրիստոնյաներին թուրք-ազերներ կամ ադրբեջանցիներ:

Իմ առջեւ բարձրահասակ, շիկահեր գերին է՝ գումարակի հրամանատարը, ազերական բանակի կապիտանը, որն ազգությամբ լեզգի է:

- Գիտե՞ս արդյոք, որ քո ժողովուրդը պատերազմի մեջ է եթե ոչ Ադրբեջանի, ապա դրա ղեկավարության հետ, որը քո ժողովրդի դեմ իրականացրել եւ իրականացնում է ցեղասպանություն, - հարցրեցի ես:

- Գիտեմ:

- Ուրեմն ինչո՞ւ ես ազերների կողմից կռվում հայերի դեմ, որոնց, ինչպես եւ լեզգիներին, թալիշներին, քրդերին, հույներին, ռուսներին ու մյուսներին, 70 տարի էթնիկական զտման են ենթարկել:

- Մենք բոլորս քարոզչության զոհեր ենք: Ադրբեջանում, այնուամենայնիվ, կարողացան բնակչությանը համոզել, որ այս պատերազմը կրոնական պատերազմ է: Ես հաճախել եմ ռուսական դպրոց, ամուսնացած եմ ռուս կնոջ հետ: Իմ մայրենի լեզուն ռուսերենն է: Իմ երկու փոքր դուստրերը կիսով չափ հրիստոնյաներ են, իսկ ես ինքս մահմեդական բանակի գումարակի հրամանատար եմ:

- Հրամանատար էիր: Հիմա այդ ամենը քեզ համար անցյալ է:

- Համաձայն եմ. վերջին երկու ամսում Ալիեւն այնպիսի քարոզչություն ծավալեց, որ թվում է, թե պատերազմը երբեք չի ավարտվի: Ինչեր ասես չեն խոսում հայերի մասին: Երեւի տասնամյակներ են հարկավոր ժողովրդի միջից այդ ամենը դուրս բերելու համար:

- Ես տեղյակ եմ դրան: Լավ գիտեմ, թե ինչ են խոսում ու գրում Բաքվում: Իսկ ինչ վերաբերում է քո ճակատագրին, խորհուրդ կտայի չտառապել դավաճանության բարդույթով, երբ մեր հրամանատարությանը պատմելու լինես ճշմարտությունը: Ի դեպ, դա հարկավոր է նաեւ ձեր ժողովրդին: Ես նկատի ունեմ ոչ միայն լեզգիներին, այլեւ ազերներին. զոհերը չափազանց շատ են:

- Համաձայն եմ: Ես Ֆիզուլու հատվածի զորքերի կազմի մեջ մտնող ութ գումարակներից մեկի հրամանատարն էի: Սկսենք վերջից: Վերջին երկու գումարակները կազմված են բացառապես աֆղաններից: Յուրաքանչյուրն ունի նռնականետ: Մեզ մոտ պնդում են, թե 300 հազար նռնականետներ գնվել կամ ձեռք են բերվել Չինաստանում: Նրանց առջեւում քրեականների գումարակն է: Ալիեւը զենք բռնելու ընդունակ բոլոր քրեական հանցագործ տղամարդկանց ազատել է բանտերից:

- Կարծում եմ, լավ կլանից չէ, որ Հեյդար Ալիեւիչն այդպես է վարվում:

- Այո, հատկապես եթե նկատի ունենանք, որ քրեականները միտումնավորի գծով անգերազանցելի վարքեր են: Մնացած հինգ գումարակները սովորական են: Դրանցում կան սլավոններ ռուսներ եւ ուկրաինացիներ: Մենք ունենք 25 տանկ, նույնքան էլ այլ զրահատեխնիկա, «Գրադ», հեռահար հրետանի: Անդադար մատուցում եւ հասցնում են ռազմամթերք:

- Քո կարծիքով, ինչո՞ւ նման ուժերով արդեն քանի օր է դուք չեք կարողանում ճեղքել պաշտպանությունը եւ դուրս գալ Կարյագինո: Դու երեւի գիտես, որ Ֆիզուլին վերջերս (մինչեւ 1959 թ. վերջը) կոչվում էր ռուս սպա Կարյագինի անունով: Դե լավ: Ուրեմն ինչո՞ւ դուք չեք կարողանում ճեղքել պաշտպանությունը:

- Ինձ համար դժվար է պատասխանել այդ հարցին: »

...Չգիտեմ, գումարակի հրամանատար Ասլանովն իրո՞ք ահաբեկչական ֆայլ է կատարել մետրոյում, բայց որ նա կամովին գերի հանձնվելով մոտեցրել է հրադադարի օրը, փաստ է: Քանզի հենց Կարյագինոյի (Ֆիզուլու) քարայում ես մի տեսակ շոշափելիորեն գիտակցեցի, որ խաղաղությունը չափազանց իրական երեւույթ է: Խաղաղությունն այն է, երբ մայրերը չեն թաղում որդիներին:

...Եթե ես ինչ-որ բանում մեղավոր եմ, ապա լոկ այն է, որ սիրում եմ հայրենիքս նույնքան ուժգին, որքան ատում եմ նրա վրա ոտնձգություն կատարողներին: Ահա թե ինչու ես ջանում եմ իմ պարբերություններից յուրաքանչյուրի մեջ պայքարել Ցեղասպանության, ահաբեկչության, սադրանքների դեմ, եւ այս հարցում, կարծում եմ, ես նման եմ, ինչպես բանաստեղծն է ասել, «օգնություն հայցող դարաշրջանի» իմ ժամանակակիցների բազմաթիվ մեծամասնությանը:

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
Երեւան

«Օբշայա գազետա» թերթի խմբագրությանը

Հարգելի խմբագրություն

Ձեր թերթում 1998 թ. մայիսի 14-ին հրապարակված «Զգույշ, դռները փակվում են: Հաջորդ կայարան չի լինի» հոդվածի առթիվ կուզենայինք նշել հետեւյալը:

Տվյալ հոդվածում նշված այսպես կոչված «Հայաստանի հատուկ ծառայությունների աշխատակիցները» երբեք այդպիսիք չեն հանդիսացել, քանի որ առհասարակ գոյություն չունեն: Նրանց հայտնվելը հիմնավորվում է լոկ Ադրբեջանի հատուկ ծառայությունների անցկացրած հետաքննության եւ դրան հաջորդած դատաքննության նյութերով: Այդ փաստը, ինչպես նաեւ Ադրբեջանի քաղաքացի, ազգությամբ լեզգի Ազեր Ասլանովի ցուցմունքները, կարելի է դասել լոկ «լավ» կազմակերպված քննության եւ դատավարության արդյունքների թվին:

Եթե ձեզ իրոք հետաքրքրում են Ադրբեջանի Հանրապետությունում առկա ահաբեկչության պատճառներն ու նախադրյալները, առաջարկում ենք ուշադրություն դարձնել Ադրբեջանի ներքաղաքական իրադրությանը եւ հատկապես ազգային փոքրամասնությունների եւ ընդդիմության նկատմամբ այնտեղ վարվող պետական քաղաքականությանը: Հենց այդ քաղաքականության հետեւանքները դարձան հազարավոր անմեղ մարդկանց կյանքեր խլած Ղարաբաղի պատերազմը, ինչպես նաեւ Ադրբեջանի հյուսիսային լեռնաբնակ շրջաններում չքուլացող լարվածությունը: Այս տեսանկյունից պարզ կդառնա, որ արտաքին բնույթի գործոնները լոկ հարմար «շանթարգել» են Ադրբեջանի համար:

ՀՀ ՆԳ եւ ԱԱ նախարարության հանրության եւ մամուլի հետ կապի ծառայություն

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՇԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թուրք լրագրողը ընդամենը տեղահանության մասին է խոսում

Լրացավ Մեծ եղեռնի 83-րդ տարին: Թերեւս այս տարելիցը նշանավորվեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հայ ժողովրդին հղած ուղերձով: Այդ ընթացքում միջազգային ասպարեզում նկատվեց Հայոց ցեղասպանության հարցի արծարծման որոշակի ակտիվություն: Բելգիայի խորհրդարանի կողմից Մեծ եղեռնի ճանաչումը այդ ակտիվության վկայությունն էր: Միաժամանակ ակտիվացան տարբեր երկրների հասարակական եւ քաղաքական կազմակերպությունները, մտավորականներն ու լրագրողները առավել եւս: Վերջիններիս շարքում, ինչ խոսք, առանձնակի կարեւորվում են թուրք մտավորականներն ու լրագրողները:

«Ազգը», հենվելով ՀԲԸՄ-ի Փարիզի տեղեկագրի վրա, մայիսի 15-ին «Թուրք մտավորականները պահանջում են ճանաչել ցեղասպանությունը եւ փոխհատուցում վճարել» խորագրով ընթերցողին տեղեկացրեց թուրք մտավորական Ռաֆիք Զարաֆոլուի ու կին լրագրող Ելդայի համապատասխան հայտարարությունները: Ընթերցողը մեր թերթի մայիսի 14-ի համարից ծանոթացել էր նաեւ «Կալիֆոռնիա կուրիեր» հանդեսի գործադիր տնօրեն Հարութ Սասունյանի թղթակցությանը, որ կրում էր «Թուրք լրագրողը դատապարտում է ցեղասպանության ժխտումը» խորագիրը:

Սրանք ողջունելի փաստեր են: Հարկ է սակայն նշել, որ ճանաչված թուրք լրագրող, Հայոի Ուլուենգինի «Հյուրրիյեթի» ապրիլի 4-ի համարում լույս տեսած հոդվածը, որը հիմք է ընդունվել Սասունյանի թղթակցության համար, ոչ թե դատապարտում է Ցեղասպանության ժխտումը Թուրքիայի կողմից, այլ թուրքական պետությանը մեղադրում է «1915 թ. հայերի տեղահանության պատասխանատվության հարցում ինքնանաղատությունից խուսափելու» մեջ: Այլ կերպ ասած, Հայոց ցեղասպանությունը Ուլուենգինի քմահաճույքով վեր է ածվում «Թալեաթի ու ընկերների կողմից կազմակերպված հայերի տեղահանության»: Իսկ տեղահանություն ձեւակերպումը որպես Ցեղասպանության փաստը հերքելու արդյունավետ միջոց, միանգամայն համապատասխանում է Թուրքիայի ազգային շահերին: Փաստորեն Հայի Ուլուենգինը Հայոց ցեղասպանությանը հաղորդելով հայերի տեղահանության բնույթ, դառնում է այդ շահերի արտահայտիչը: Ուրեմն վերապահությունը նրա հոդվածի նկատմամբ անհրաժեշտություն է դառնում: Քանի որ Հարութ Սասունյանը հենվում է այդ հոդվածի վրա, ուստի եւ նրա թղթակցությունը գնահատելիս եւս վերապահություն է պահանջվում:

Ի դեպ, «Հյուրրիյեթի» ապրիլի 22-ի համարում Ուլուենգինի գործընկեր Օֆտայ Էրճին եւս անդրադարձել է Հայոց ցեղասպանության խնդրին: Վերջինս, ի տարբերություն Ուլուենգինի, Ցեղասպանությանը անդրադառնալու համար դատապարտել է CNN-ին: «Ամոթ CNN-ին» խորագրով հոդվածում Օֆթայ Էրճին ափսոսանքով է գրում. «Ցավալին 1915 թ. հայերի տեղահանության եւ հիտլերյան Գերմանիայում հրեաների ցեղասպանության միջեւ զուգահեռների անցկացումը չէ, ոչ էլ թուրքերին սեփական տեսակետը արտահայտելու իրավունքից զրկելը, այլ CNN-ի պես լուրջ հեռուստակայանի կողմից անկողմնակալության սկզբունքի կոպիտ ոտնահարումը»:

Ինչպես տեսնում եք, եթե Հայի Ուլուենգինը ասիտատիվ է հայտնում թե Թուրքիան առ այսօր խուսափում է 1915 թ.-ի հայերի տեղահանության պատասխանատվությունից, ապա Էրճին ափսոսանքով է նշում, որ հայերի տեղահանությունը CNN-ի կողմից որակվում է որպես կոտորած եւ համեմատվում հրեաների ջարդերի հետ: Այսինքն, վերոհիշյալ լրագրողները Մեծ եղեռնի խնդրին մոտենալով հակառակ տեսանկյունից, հանգում են «1915 թ. տեղահանության» եզրակացությանը: Այդ ընթացքում հայ ընթերցողին քաջ հայտնի Բեռնարդ Լյուիսին Անկարայում «Աթաթուրքի անվան միջազգային մրցանակ է շնորհվում»:

Այդ մրցանակը մայիսի 14-ին ամերիկացի գիտնականին հանձնեց Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը, ընդգծելով, որ վերջինս դրան արժանացել է Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված ուսումնասիրությունների եւ պատմական խնդիրներին անաչառ վերաբերվելու համար: Թեեւ Դեմիրելը շրջանցեց այսպես կոչված պատմական խնդիրները, բայց գաղտնիք չէ, որ դրանց մեջ խիստ կարեւորվում են 1915 թ. ցեղասպանությունը եւ Բեռնարդ Լյուիսի կողմից ցեղասպանության փաստի ժխտումը: Հարկ է նշել, որ Լյուիսն իր ասխատություններում հայերի ցեղասպանության փաստը հերքում եւ փորձում է նույնացնել տեղահանության հետ: «Աթաթուրքի անվան միջազգային մրցանակի» հանձնումը նրան այս ամենի առումով պատահական չէ: Ավելի քան պատահական չէ «Օսմանյան կայսրության խնդիրների անաչառ լուսաբանումը», որ վերագրվում է Բեռնարդ Լյուիսին:

Կարեւորը սակայն ոչ այդ մրցանակն է, ոչ էլ Լյուիսի այսպես կոչված անաչառ ուսումնասիրությունները, այլ 1915 թ. ցեղասպանության հարցը քաղաքական ոլորտից ակադեմիական ոլորտ փոխադրելու միտումներն են: Եթե նույնիսկ վերոհիշյալ Հայի Ուլուենգինը անկեղծորեն ընդունելու լիներ 1915 թ.-ի ցեղասպանության փաստը մոռանալուն է նա կամա թե ակամա տարք էր տալու այդ միտումներին: Ինչ վերաբերում է վերոհիշյալ թուրք մտավորականներին, որոնց թիվը մնում է խիստ սահմանափակ, ապա նրանք ընդամենը նպաստում են հարցը քաղաքական ոլորտից ակադեմիական ոլորտ փոխադրելու միտումների զարգացմանը: Ուստի եւ վերապահությունն անհրաժեշտ է նաեւ թուրք մտավորականների համանման պահանջների նկատմամբ:

ՀԱՅՈՐ ՉԱՔԲԱՏԵՆ

ՄՈՍԿՎԱ

Բորիս Պաստուխովին՝ համապետական նախարարի իրավունքներ

ՄՈՍԿՎԱ, 21 ՄԱՅԻՍ. ԱՐՄԵՆՊՐԵՍ- Բորիս Ելցինն ստորագրել է «Անկախ պետությունների համագործակցության եւ նրա մեջ մտնող պետությունների նկատմամբ Ռուսաստանի Դաշնության քաղաքականության իրականացման մասին» հրամանագիր: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, այդ մասին ասվում է պետության ղեկավարի մամլո ծառայության հաղորդման մեջ:

Նախագահը որոշել է, որ Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի առաջին փոխնախարարը, որը պատասխանատու է ԱՊՀ-ի պետությունների հետ համագործակցության համար, Ռուսաստանի եւ ԱՊՀ-ի երկրների միջազգային համագործակցության հարցերում գործադիր իշխանության դաշնապետական մարմինների գործունեությունը փոխկապակցելու միջոցառումներ իրականացնելիս օգտվում է համապետական նախարարի իրավունքներից:

Բորիս Ելցինը արտգործնախարարի առաջին տեղակալ Բորիս Պաստուխովի վրա է դրել ԱՊՀ-ի եւ նրա մեջ մտնող պետությունների հետ Ռուսաստանի համագործակցությունն ապահովելու՝ գործադիր իշխանության դաշնապետական մարմինների գործունեության փոխկապակցումը:

ՀԱՄԱՍՈՏ

Ինդոնեզիայի նախագահ Սուհարտոն հրաժարական տվեց

ՋԱԿԱՐՏԱ, 21 ՄԱՅԻՍ. ԱՐՄԵՆՊՐԵՍ- Ինդոնեզիայի նախագահ Սուհարտոն, որը երկրում կառավարել էր գրեթե մեկ երրորդ դար, այսօր հայտարարեց հրաժարական տալու մասին: Ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը, որպես պետության նոր ղեկավար երդում է տվել Բուրխանուդին Յուսուֆ Հաբիբին, որը ոչ մինչ այդ զբաղեցնում էր փոխնախագահի պաշտոնը: Ինդոնեզիայի պաշտպանության նախարար եւ զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Վիրանտոն հայտարարել է, թե բանակը, որն ավանդաբար հսկայական ազդեցություն է վայելում երկրում, պաշտպանում է պետության ղեկավարության մեջ կատարված փոփոխությունները:

Գազայում այլեւս «Համասի» կրծքանշաններ չեն վաճառվում

Պաղեստինցիների ազգային ինքնավարության իշխանությունների եւ ընդդիմադիր իսլամ արմատականների հարաբերությունները վերջերս վատթարացել են: Դրա վկայություններից մեկն այն է, որ Գազայի հատվածում գործող հուշանվերների միակ խանութում այլեւս չեն վաճառվում «Համասի» եւ իսլամական «Ջիհադի» խորհրդանշանները կրող ապրանքներ: Մինչդեռ վաճառասեղանները լի են բազմաթիվ ուրիշ կրծքանշաններով, դիմանկարներով, ազդագրերով, դրոշներով, որոնց վրա պատկերված են Յասեր Արաֆաթը, Ինթիֆադայի նախկին ղեկավար Աբու Ջիհադը, եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը եւ նույնիսկ Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնը: Սակայն բացակայում են «Համասի» առաջնորդ շեյխ Յասինի եւ Իսրայելում ածնասպանական մահափորձեր կատարած «նահատակների» պատկերը կրող հուշանվերները:

Ֆրանսիան վախենում է ալժիրցի ահաբեկիչներից

Ֆրանսիայի անվտանգության ծառայությունները կազմուպատրաստ վիճակի են բերվել ֆուտբոլի աշխարհի առաջնության օրերին ալժիրցի իսլամ ահաբեկիչների հնարավոր գործողությունների կանխման նպատակով: Այս երկյուղները միանգամայն հիմնավոր են, քանզի ալժիրյան «Փրկության իսլամական բանակի» հայտարարած զինադադարից հետո Ալժիրի եւ Ֆրանսիայի իշխանությունների դեմ սրբազան պատերազմի՝ ջիհադի մենաշնորհին հավակնում են «Իսլամական զինված խմբավորման» գրոհայինները: Փարիզում հակաահաբեկչական պայքարի մասնագետները ենթադրում են, որ այդ խմբավորման ահաբեկիչները կնախընտրեն կիրառել դժվարությամբ հայտնաբերվող դանդաղ գործողության ռումբեր եւ ոչ թե անձնասպանական մահափորձեր, որոնք անհարիր են խմբավորման գործելակերպին:

«ԷՔՍՊՐԵՍ»

Կազմավորումից 50 տարի անց դարձյա՞լ արվում են Պակիստանի հարաբերությունները Հնդկաստանի հետ

1940 թ. մարտի 23-ին Համահնդկական մուսուլմանական լիգայի այն ժամանակի նախագահ Մոհամեդ Ալի Ջիննան հնդկական թերակղզում մահմեդականների համար անկախ պետություն ստեղծելու պահանջ դրեց: Երբ 7 տարի հետո անգլիացիները հեռացան, թերակղզին բաժանվեց երկու անկախ պետությունների՝ հինդու Հնդկաստանի եւ մահմեդական Պակիստանի, որը բաղկացած էր երկու մասից՝ արեւելյան եւ արեւմտյան: Արեւելյան մասը, որ 1500 կմ հեռու էր արեւմտյանից, 1971 թ. անջատվեց եւ կոչվեց Բանգլադեշ: Իր երազած պետության ստեղծումից հազիվ մի տարի անց Ջիննան մահացավ թոքախտից: «Մենք տարբեր էակներ ենք, ասել էր նա, տարբեր՝ անունով, հագուստով եւ ուտելիքով»:

Կազմավորման 50-ամյակին նվիրված «Նեքսնքլ ջեոգրաֆիկի» հոդվածում նշվում է, որ թերակղզու բաժանման ժամանակ 15 մլն մարդ տեղահան եղավ: Հինդուները Պակիստանից անցան Հնդկաստան, իսկ մահմեդականները՝ հակառակը: 140 մլն-անոց երկրի 5 գլխավոր էթնիկական խմբերն են փենջաբիները, սինդիները, փուշտունները, բելուջիները եւ մուհաջիրները: Բաժանումից անմիջապես հետո Պակիստանն ու Հնդկաստանը իրար դեմ պատերազմեցին լեռնային Քաշմիրի շրջանի համար, որի բնակչությունը ԺԴ դարից մահմեդական է: Վեճը շարունակվում է, եւ Պակիստանի բյուջեի 5 տոկոսը ծախսվում է՝ իր ավելի խոշոր հարեւանից պաշտպանվելու համար, որը 1974-ին փորձարկեց իր առաջին ատոմային ռումբը:

Զենք եւ օգնություն ստանալու համար Պակիստանը մշտապես տարբեր դերեր է ստանձնել Արեւմուտքի համար: Նա պատեհ է հանդիսացել 1980-ականներին խորհրդային ծավալման դեմ, ռազմավարական դաշնակից է եղել նավթով հարուստ Պարսից ծոցի մերձակայքում եւ միաժամանակ ներկայացել է որպես աշխարհաքաղաքական մի ուժ, որը կարող է միջուկային զենք արտադրել: Խորհրդային զորքերի Աֆղանստան ներխուժման ժամանակ մեծ չափերի հասած ամերիկյան ռազմական օգնությունը 1990-ին հանկարծ կասեցվեց, երբ Մ. Նահանգները կասկածեց, որ Պակիստանն իր սեփական ատոմային ռումբն է ստեղծում:

Մինչեւ 1947-ը Պակիստանը հիմնականում հումքի աղբյուր էր Հնդկաստանի մյուս շրջանների համար: Անցնող 50 տարիներին երկրի տնտեսությունն աճեց դանդաղ՝ տարեկան կազմելով 6 տոկոս: Ոռոգման մի ընդարձակ ծրագիր երկրի մեկ հինգերորդը դարձրեց մշակելի: Թեթեւ արդյունաբերությունը կենտրոնացված է երկու խոշորագույն՝ Լահոր եւ Կարաչի քաղաքներում (վերջինս նախկին մայրաքաղաքն է):

Անկախությունից հետո երկրի բնակչությունը քառապատկվել է եւ շարունակում է աճել տարեկան մոտ 3 տոկոսով: Կան նաեւ 3,5 մլն աֆղան գաղթականներ: Անհատի տարեկան միջին եկամուտը կազմում է 450 դոլար, որը խիստ ցածր է, եթե նկատի ունենանք, որ Թայլանդում կազմում է 2740 դոլար:



Գլխավոր քաղաք Կարաչին այսօր ավելի քան 10 մլն բնակչություն ունի: Այն արագ ընդարձակվում է՝ կլանելով շրջակա ավազակները: Քաղաքի կենտրոնը հայտնի է Սադդար անունով: Թաղամասի գլխավոր փողոցներում կողք-կողքի կտեսնեք ամեն տեսակ տրանսպորտ՝ նկարազարդ ավտոբուսներ, ռիկշաներ, «Մերսեդես-Բենցեր», եզներ եւ ուղտեր լծած սայլեր:

Կարաչիում կանայք իրենց ավելի ազատ են զգում: Նրանք ամուսնանում են ում հետ ցանկանում են, ամուսնալուծվում են, երբ ուզում են, իրենց համար տներ են գնում եւ սեփական մեքենաներ վարում: Սակայն Միջազգային ներում կազմակերպության տվյալներով, ընդհանրապես Պակիստանում խիստ տարածված են կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունները: Բայց այդ հանցագործությունները հաճախ համարվում են անձնական խնդիրներ եւ հազվադեպ են պատժվում:

Հնդկաստանից անջատվելու շրջանում Լահորը Պակիստանի գլխավոր քաղաքն էր եւ նրա ուսումնական կենտրոնը: Մի ամբողջ հազարամյակ եղել է Փենջաբի մայրաքաղաքը: Բոլոր նվաճողներն էլ այնտեղ ծառայաքաղաքական ժառանգություն են թողել: Սիխերի տաճարների կողքին կանգնած են մողուլական մզկիթներ, իսկ սրանց կողքին՝ անգլիական վարչական շենքերը:

Պակիստանը հավատի վրա հիմնված պետություն է: Սունի մահմեդականները կազմում են բնակչության 77 տոկոսը, շիա մահմեդականները՝ 20, իսկ քրիստոնյաները՝ 2 տոկոսը: Տարիներով զինվորական վարչակարգի տակ ապրելուց հետո, 1988-ից ի վեր Պակիստանը ժողովրդավարական ժամանակաշրջան է թեւակոխել, երբ նախկին վարչապետ Բենազիր Բհուտոն՝ մահմեդական պետություն ղեկավարող առաջին կինը շահեց ընտրությունը:

Վերջին օրերի լուրերը հաստատում են, որ Պակիստանը պատրաստ է իր սեփական միջուկային փորձարկումներն անցկացնելու՝ ի պատասխան Հնդկաստանի նույնանման փորձարկումների: «Պակիստանը նույնպես ներուժ ունի», հայտարարել է երկրի վարչապետ Նավազ Շարիֆը:

Պատրաստեց
ՀԱՅՈՐ ԱՍՏՎԱԾԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Մեկ օր Ներսես Աշտարակեցու անվան համալսարանում

Աշտարակի բուհը՝ լավագույններից է հանրապետության ոչ պետական ուսումնական հաստատությունների թվում

Արդեն չորս տարի է, ինչ գործում է Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան համալսարանը:

Երեկ առիթ ունեցա հյուրընկալվելու Արագածոտնի աչքի ընկնող այդ կրթական օջախում: Հայտնի է, որ այսօր Հայաստանում գործում են շուրջ 80 ոչ պետական բուհեր: Փաստ, որն արդեն իսկ լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Արդյոք անհրաժե՞շտ է նման բուհերի այդպիսի մեծ քանակը եւ առավել կարեւորը. համապատասխանո՞ւմ է արդյոք դրանց գիտական-ուսումնական մակարդակը արդի բուհի պատշաճ չափանիշներին, եւ ժամանակը չէ՞ արդ պետական խստիվ նպակարդակով զսում կատարել այդ ատպարեզում: Ուսումնասիրման արդեն որոշակի փորձը ցույց է տվել, որ դրանցից շատերը ընդհանրապես չունեն գոյության իրավունք, թե իրենց ցածր կազմակերպչական-ադմինիստրատիվ, թե կրթական-ուսումնական, թե բուհում տիրող մարդկային-բարոյական մթնոլորտի առումներով: Նման օրինակներից մեկը՝ Աբովյան քաղաքի Նարեկացու անվան տխրահռչակ համալսարանն է: Ինչեւ՞...

Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան համալսարանն աչքագրավ է ոչ միայն գեղատեսիլ լեռնապարով շրջապատված, իրեն պարուրող բնապատկերով, այլեւ շենքի մաքրությամբ, ամենուրեք իշխող կարգ ու կանոնով, ընդհանուր կիրթ ու գործնական մթնոլորտով: Ի տարբերություն շատ այլ իմ հաճախած նմանատիպ բուհերի, այստեղ կրթական օջախին հարիր լություն է տիրում, եւ, դարձյալ ի տարբերումն մի շարք ոչ պետական համալսարանների (Երեւանում եւ շրջաններում) ուսանողության (հիմնականում աղջիկներ են) հագ ու կապը, արտաքին տեսքն ու պահվածքը ոչ թե ժամանակակից ու երբեմն սանձարձակ մոդաների շերթ է հիշեցնում, այլ պատշաճ է, թող ասի, բայց չափի զգացողությունը չանցած երիտասարդությանը:

Սա առաջին տպավորությունն է: Բացում եմ պատահած լսարանի դուռը, հիշելով երիտասարդ ուսանողական տարիներս անաղմուկ նստում եմ փոքրիկ լուսավոր լսարանի վերջին նստարանին: Քիչ անց ինձ թվում է, որ ժամանակը ետ է պտտվել, եւ ես քայլում եմ հին Հռոմի սալահատակ փողոցներով, իսկ ականջներիս հասնում է «դեմոսի» աղմուկը, որի հիացական ողջույնների տարափից, երկար ձերմակ զգեստի ծալքերը ոտքերին փաթաթվելով, նեղլիկ նրբանցքներով վազխչում է ինքը... Վիրգիլիուսը: «Չի հայտնի է, ծեռի արհեստականորեն արտահայտիչ շարժումով համեմելով լսարանի առջեւ ուրվագրվող պատկերը, ասում է դասախոսը, որ հին Հռոմի մեծն բանաստեղծ Վիրգիլիուսը չափազանց համեստ է եղել: Վստահ, թիկնեղ եւ գեղեցիկ այդ հռոմեացին, որի «Բուկոլիկները» եւ «Էնեականը» բերանացի գիտեր ամեն մի իրեն հարգող թե պատրիկ, թե «սովորական մահկանացու», փախչում էր ամբոխից, որն իր կուռքի ետեւից ընկած հետաքնդում էր նրան «vivat» բացականչություններով: Լսարանը լռում է. տեսնում է, «վարակվում» դասախոսից, որը քայլ առ քայլ հոետորական էնտուզիազմով կերտում է նրանց առջեւ անցած դարերի կենդանի պատկերն ու շունչը: Դասախոսը՝ բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, Երեւանի պետական համալսարանի արտասահմանյան գրականության տեսության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հենրիկ Էդոյանն է: Մտաբերում եմ, որ Ներսես Աշտարակեցու համալսարանում դասավանդում են 6 պրոֆեսոր, 15 գիտության թեկնածու, դոկտորներ, հմուտ եւ ճանաչված մանկավարժներ: Սրանք պարզապես թվեր չեն: Ավելի խորամուխ լինելով բուհի ընթացիկ կյանքին, նրա ուսանողության մասնագիտական պատրաստվածության մակարդակին, պարզորոշ է դառնում. սա Ներսես Աշտարակեցու համալսարանի այսօրվա դեմքն է, այցեստնը, որով նա կարող է ոտք դնել Հայաստանի բուհական համակարգի ոլորտը եւ մրցել լավագույն հաստատությունների հետ:

Դասամիջոցին ուսանողները ոգեւորված պատմեցին ինձ, որ համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչում է շնորհվել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ին, թե հպարտ են, որ իրենց ընտրած բուհը կրում է հայ եկեղեցական եւ պատմական լուսապսակ դեմքերից մեկի՝ կաթողիկոս Ներսես Աշտարակեցու անունը, որ ամեն տարի առաջին կուրսեցիները երդում են տալիս Առաջնորդանիստ Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, որ այդտեղ ստացել են Ամենայն Հայոց կաթողիկոսի հայրական օրհնությունը, որ Արագածոտնի թեմը պարբերաբար կաթողիկոս Ներսես Աշտարակեցու անվան թոշակով խրախուսում է բուհի լավագույն ուսանողներին, որ եկեղեցականները համալսարանում հանդես են գալիս հեսաֆրիական դասախոսություններով: Ուրախությամբ նշեցին նաեւ այն փաստը, որ համալսարանն ունի իր պարբերականը, եւ որ այս տարի համալսարանի կյանքում նշանակալից իրադարձություն է տեղի ունեցել. նրան, որպես սեփականություն հանձնվել է Աշտարակ քաղաքի վերանորոգված նախկին Դպրոցականների տունը:

Զանգն ազդանշում է հաջորդ դասաժամի սկիզբը եւ ես իմ զրույցը շարունակում եմ Ներսես Աշտարակեցու անվան համալսարանի ռեկտոր Մարտին Գրիգորյանի հետ: «Մոսկվայում ես գործնական հանդիպումներ ունեցա հայկական մեծաթիվ համայնքի ներկայացուցիչների եւ հայ եկեղեցու թեմի առաջնորդ Հայր Սուրբ Տիրանի հետ: Նրանք առաջ քաշեցին Մոսկվայում բարձրագույն կրթության ուսուցման կազմակերպելու խնդիրը: Ռուսաստանի Դաշնության բարձրագույն կրթության պետական կոմիտեի նախագահ պրն Շադրիկովը պատրաստակամությամբ արձագանքեց հայկական-ռուսական բուհի ստեղծման մտահղացմանը: Եվ այսօր, մեր մասնաճյուղը Մոսկվայում միակն է որպես արտոնագրված ազգային բարձրագույն ուսումնական հաստատություն: Մոսկվայի կենտրոնում նրան դպրոցի շենք է հատկացված՝ իր բոլոր հարմարություններով, համակարգչային սարքավորումներով»:

Ավելացնենք նաեւ, որ մոսկովյան մասնաճյուղը բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն կընձեռի այնտեղ ապրող մեր հայրենակիցներից բազմաթիվ երիտասարդներ, ինչը մեծապես կնպաստի նաեւ նրանց առավել սերտ եւ մշտական կապի հայրենիքի հետ:

Ռեկտորի աշխատասենյակում ծանոթանում եմ երկու չափազանց կարեւոր, եւ պետական մակարդակով բուհին արդեն իսկ հանրապետության մասշտաբով նշանակալի տեղ եւ ուշադրություն հատկացնելու փաստաթղթերին: Այն է՝ ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարությունից եւ ՀՀ մշակույթի, երիտասարդության եւ սպորտի նախարարությունից ստացված նամակներն առ այն, որ Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան համալսարանի սոցիալ-մշակութային ծառայություն եւ տուրիզմ ֆակուլտետի շրջանավարտներին աշխատանքով ապահովելու մտահոգությամբ հիշյալ նախարարությունները 2001 թվից սկսած առաջարկում են իրենց համակարգում աշխատատեղեր: 10 տեղ՝ զբոսաշրջության ոլորտի օբյեկտներում, 5 տեղ՝ պատմական մշակույթի պահպանության մարզային ծառայությունների ասպարեզում:

Համալսարանն այսօր ունի 6 բաժին. ֆինանսներ եւ վարկ, տնտեսագիտական-իրավաբանական, իրավագիտություն, ժուռնալիստիկա, սոցիալ-մշակութային ծառայություն եւ տուրիզմ, որը միակն է Հայաստանում, տարրական կրթություն մասնագիտություն եւ մեթոդիկա:

Իրապես, ինչ բան չի արվել անցած 3 տարիների ընթացքում: Բուհն ապրեց կայացման եւ հաստատման շրջան: Տարի առ տարի ավելացրեց ուսուցանվող մասնագիտությունների քանակը, ամուր հիմքերի վրա դրվեց կրթական գործը, սերմանեց բարի ավանդույթներ, դրանով իսկ առաջատար տեղ գրավելով հանրապետության ոչ պետական բուհերի շարքում:

Շնորհակալություն հայտնելով համալսարանի ռեկտորին թե մասնագիտական փորձով եւ բարձր գիտակցությամբ երիտասարդ սերնդի հանդեպ տածած մտահոգությամբ արվող իր արժանահիշատակ գործի, թե ինձ բուհի առօրյային քաջատեղյակ պահելու համար, ես հրաժեշտ եմ տալիս նրան: Համալսարանի միջանցքներում լռություն է: Դարձյալ բացում եմ լսարաններից մեկի դուռը:

«Շարենց, Բակունց, Թոքվենց... Գուրգեն Մահարին նրանց ժամանակակիցն էր: Ի տարբերություն նրանց, Մահարուն վիճակված էր ապրել, բայց այդ շարունակվող կյանքը ներառել էր իր մեծ ժամանակակիցների ողբերգական ճակատագիրը», լսում եմ ներքին խորխոչ ու պրկված հուզականությամբ հագեցած ծանոթ ձայն: Նորայր Ադալյանն իր տարերքի մեջ է: Ճանաչված գրող, որին դոկտորի աստիճան է շնորհվել Վահան Թոքվենցի կյանքին եւ ստեղծագործությանը նվիրված ուսումնասիրության համար: Նա, որ շատ քչերի թվում եղել է Մահարու ծանր օրերի հավատարիմ կրտսեր ընկերը եւ մեզանում միակը, որ ամսորից հետո էլ շարունակվող խոշտանգումների գրավոր իր խոսքն է ուղղել գրչակցի, հայ պայծառ մտավորականին ի պատասխան: Լսարանում տիրող կարեկցաթաթավ լռությունը խախտում է մի ինքուրույն աղջկական ձայն. «Ես կարդացել եմ Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» վեպը: «Այդ վեպը, ինչպես եւ «Մրգահաս» բանաստեղծական ժողովածուն՝ խորաթափանց կերպով արտահայտում են մարդկային դրամայի բազմերանգ շերտերը, դրանց հագեցնելով ոչ միայն անձնական, այլեւ վերանձնային, համամարդկային հնչեղությամբ»: «Մարդկային դրամա» խոսքերը Նորայր Ադալյանն արտասանում է տառապանքի եւ կարեկցության, համազգացության եւ ցավի այնպիսի մի խտացված ներքին շեշտադրվածությամբ, որ թվում է, ուզում է երկու բառի մեջ մակարդել այս խեղճ մոլորակի վրա երբեւէ ապրած եւ ապրող բոլոր մարդկանց տառապանքներն ու ալեկոծումները: Լսարանը պահել է շունչը, նրա առկայծող տասը զույգ աղջկական աչքերում թրթռում է մի բազմաբովանդակ հայացք: Դասախոսի կերտած մթնոլորտին համահունչ ու ներդաշնակ՝ մարդկային ցավի, կարեկցանքի, զարմանքի եւ ահի, ափսոսանքի, կյանքի դաժան իրողության հանդեպ, եւ հույսի ու հավատի առ այն, որ ի վերջո կյանքում հաղթում է ճշմարտությունն ու բարին: Ազգի հոգեւոր արժեքների նկատմամբ տածած ցավի, բարության, հումանիզմի դաս է սա: Եվ ես ակնթարթորեն տեսնում եմ ինչպես է լսարանը նորին մեծություն՝ պահի ազդեցության ներքո առավել լուսավորվում մի ներքին հոգեւոր լույսով:

Ասողին լսող է պետք, բայց եւ լսողին՝ ասող: Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան համալսարանի շուրջ 300 ուսանողները, իրապես, այդպիսիներից են: Նրանցից, որ բուհ են ոտք դնում մասնագիտական լուրջ գիտելիքներ ստանալու, կյանքում իրենց արդար տեղն ու վաստակը արժանավայել ձեռք բերելու երազանքով: Եվ, վստահաբար, ի դեմս բուհի ղեկավարությանը, նրա մանկավարժական բարձրակարգ կազմի եւ պետական ուշադրությանը՝ ունեն բոլոր երաշխիքները իրենց ընտրած ճանապարհով անշեղորեն քայլելու համար:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՄՆ

Տպագրվելու է «Հայաստանի թռչուններ» գրքի հայկական տարբերակը

Այս տարի լույս կտեսնի «Հայաստանի թռչուններ» գրքի հայկական տարբերակը, որի անգլերեն օրինակը Անգլիայում կայացած գրքի տոնավաճառում արժանացել է մեծ գնահատականի: Այս մասին «ԱՌԿԱ» գործակալությանը ասաց «Հայաստանի թռչուններ» նախագծի հայկական կողմի ղեկավար Մարտին Ադամյանը:

«Գրքի հրատարակման նախաձեռնությունը ամերիկահայ խոշոր արդյունաբերող Սարգիս Հակոբյանինն էր: 1993 թ. դժվարին տարիներին սկսվեցին կազմակերպչական աշխատանքները, 1996 թ. վերջնականապես գիրքը խմբագրվեց եւ 1997 թ. հունիս ամսին 6000 տպաքանակով անգլերեն օրինակը լույս տեսավ: «Հայաստանի թռչուններ» գրքի անգլերեն տարբերակը հրատարակվել է Կալիֆորնիայի համալսարանում, հայկական օրինակը նույնպես լույս կտեսնի ԱՄՆ-ում:

Հայաստանը լեռնային տարածք է, որտեղ արտահայտված են չորս լանդշաֆտային գոտիներ, որոնք նպաստել են հարուստ թռչնաշխարհի առկայությանը՝ 348 տեսակ: Գիրքը ինքնաշիտ է թռչունների տեսակների տարածման գունավոր քարտեզներով: Այն ներառում է նաեւ չորրորդ դարում ապրած եւ ստեղծագործած փիլիսոփա Բարսեղ Կեսարացու գրառումներից հատվածներ եւ 16-17 դդ. Աբրահամ Պոլսեցու «Կենդանաբանություն» գրքից տեղեկություններ, ասաց Մ. Ադամյանը: Նա ասաց նաեւ, որ բնապահպանական նկատառումներից ելնելով, հայերեն օրինակում որոշված է փոքրագրել քարտեզները: Գիրքն ունի ճանաչողական, ուսուցողական, գեղագիտական նշանակություն: Գրքի նյութերի հավաքագրմանը մասնակցել են հայ, ամերիկացի, անգլիացի, ռուս մասնագետներ:



ՍՈԿԱ

Գրող Անելը պարգեւատրված

Կանադայում հրատարակվող «Արագայ» շաբաթաթերթն իր «Հայ սփյուռք» բաժնում տեղեկացնում է, որ բանաստեղծ եւ արձակագիր դոկտ. Կարո Կարապետյանը (գրական ծածկանունով Անել), վերջերս Փարիզում ստացել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Մեսրոպ Մաշտոց շքանշանը, ձեռամբ Մեսրոպ արք. Աշճյանի: Ջեյթունցի ծնողների զավակ դոկտ. Կարապետյանը ծնվել է 1922 թ-ին, Երուսաղեմում: Թարգմանչաց դպրոցն ավարտելուց հետո միջնակարգ ուսումը շարունակել է ֆրանսիական վարժարանում, որտեղից անցել է Բեյրութ բժշկություն ուսանելու: 1955-ին տեղափոխվել է Ամերիկա մասնագիտանալու համար արտաքնության ասպարեզում:

Քերթվածների առաջին հատորը լույս է տեսել 1945-ին «Սութ ցավեր» խորագրով, ապա հաջորդել են «Տեսիլ գինովի» (1951) եւ «Պարը հույսին» (1955) հատորները: 1975-ին հրատարակվել է «Ոգի մաքրոտ» գիրքը իսկ անցյալ տարի «Ի մտանել արեգական» հատորը: Գրել է նաեւ պատմվածքներ:

ԵՐԵՎԱՆ

Գյումրեցի երեխաների ելույթը

Խնկո Ապոր անվան ազգային գրադարանը միջոցառումներ անցկացնելու մեծ ավանդույթ ունի, հանգի ամենաշատ ընթերցասեր մանուկներն այստեղ են հաճախում: Այս անգամ գյումրեցի երեխաներն էին հյուրընկալվել գրադարանում: Ճեմարահում նրանց դիմավորեցին համերգային գեղեցիկ ծրագրով, ելույթներ ունեցան Երեւանի պարարվեստի ուսումնարանի սաները, «Էլենը եւ երեխաները» ժամանակակից պարահանդեսային պարերի թատրոն ստուդիայի պարող դերասանները՝ Էլեն Գրիգորյանի ղեկավարությամբ, ապա հանդես եկան Մալաթիա հայորդաց տան «Տաքեւ» մանկական պարային համույթը, գեղարվեստական ղեկավար Սոս Ստեփանյանը:

Ցերեկույթի կազմակերպիչն ու նախաձեռնողն ազգային գրադարանի կոլեկտիվն էր: Փոխտնօրենն իր ամփոփիչ խոսքում ասաց, որ այդպիսի հանդիպումները տարբեր մարզերում պարող երեխաների հետ այսուհետեւ կշարունակվեն եւ կդառնան ավանդույթ: Միջոցառմանը ներկա էին ՀՀ մշակույթի փոխնախարար Արամ Մանուկյանը, բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, Երեւանի պարարվեստի ուսումնարանի տնօրեն Թերեզա Գրիգորյանը:

«Բրաբիոն սալյուս սերվիսը» առաջարկում է իր ծառայությունները

«Բրաբիոն ֆլորա սերվիսի» մասնաճյուղերին («Բրաբիոն ագրո սերվիս», «Բրաբիոն սգո սերվիս», «Բրաբիոն էլիտա սերվիս», «Բրաբիոն ունի սերվիս») վերջերս ավելացած «Բրաբիոն սալյուս սերվիսի» (Իսահակյան 14) նոցասակը ամենափոքրից (ծննդյան օրերի, ընտանեկան տոների, հոբելյանների ժամանակ օգտագործվող փոքրիկ մոմիկներ եւ այլն) մինչեւ լայնամասշտաբ հրավառությունների անվտանգ եւ բարձրակարգ կազմակերպումն ու սպասարկումն է: Հաճախորդները նաեւ հնարավորություն ունեն խորհրդակցելու ֆիրմայի մասնագետների հետ:

Այսօր «Բրաբիոնը հուսո ծաղիկ» փառատոնը կնշվի «Բրաբիոն սալյուս սերվիսի» յուրահատուկ եւ գեղեցիկ հրավառությամբ:

Ա. Ա.

ՀՈԲԵԼՅԱՐ



digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՕԼԻՄՊԻԱ

Տեղադրվեց Վարազդատ թագավորի կիսանդրին

Հունաստանում անցկացվեց ազգային օլիմպիական ակադեմիաների տնօրենների ամենամյա գիտական նստաշրջանը, որին մասնակցեցին 69 երկրների ներկայացուցիչներ: Համաշխարհային այդ համաժողովի աշխատանքներին մասնակցեցին նաեւ Հայաստանի ազգային օլիմպիական ակադեմիայի տնօրեն, ֆիզիկական կուլտուրայի հայկական ինստիտուտի ռեկտոր Ռոբերտ Գալստյանը, ակադեմիայի դեկան, նույն ինստիտուտի հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր Հարություն Բաբայանը:

ՀԱՕԱ-ի տնօրեն Ռոբերտ Գալստյանը նստաշրջանում հանդես եկավ զեկուցմամբ, որտեղ խոսեց ՀԱՕԿ-ի եւ ՀԱՕԱ-ի համագործակցության մասին: Նա ներկայացրեց մեր ազգային օլիմպիական ակադեմիայի գործունեությունը, խոսեց հանրապետությունում օլիմպիական շարժման, օլիմպիական կրթության վերաբերյալ տարվող աշխատանքների մասին:

Օլիմպիա քաղաք էին մեկնել նաեւ ազգային օլիմպիական ակադեմիայի փոխտնօրեն Միխայել Իսպիրյանը եւ ժողովրդական խաղակագործ Լեւոն Թոմաջյանը: Հ�հ ազգային օլիմպիական կոմիտեի եւ ազգային ակադեմիական պատվիրակությունը Օլիմպիայում էին անչափ կարեւոր իրադարձության կապակցությամբ:

Հին աշխարհի օլիմպիական խաղերի չեմպիոն Վարազդատ թագավորի արձանը ստեղծելու, տեղադրելու գաղափարը երկար տարիներ հանգիստ չէր տալիս սպորտի բնագավառի երկարամյա, հեղինակավոր աշխատող, օլիմպիական շարժման խոշոր մասնագետ Միխայել Իսպիրյանին: Դեռեւս մի քանի տարի առաջ կիսանդրու մրցույթ հայտարարվեց: Սակայն ներկայացվածներից ոչ մեկը հավանություն չստացավ: Այդ ժամանակ որոշեցին դիմել Լեւոն Թոմաջյանին: Եվ ականավոր խաղակագործը կերտեց արձանը:

Պատվիրակության անդամները հայոց թագավոր Վարազդատ Արշակունու մարմարյա կիսանդրին նվիրեցին Օլիմպիական միջազգային ակադեմիային:

Վարազդատ թագավորը օլիմպիական չեմպիոն է դարձել բոքսամարտիկների մրցումներում: Դրա վերաբերյալ գրառում կա Օլիմպիայի թանգարանում, որտեղ գրված է՝ «291-րդ խաղեր, 385 թիվ, Վարազդատս կամ Արտավազդոս, Արմենիոս»:

Կիսանդրին տեղադրվեց նույնքան մարմարյա, չափազանց համաչափ տպավորությամբ: Հանդիսավոր արարողության ժամանակ, դիմելով Միջազգային օլիմպիական ակադեմիայի նախագահ, Միջազգային օլիմպիական կոմիտեի անդամ Նիկոլայոս Ֆիլարետոսին, բոլոր ներկաներին, Միխայել Իսպիրյանը նշեց, որ Վարազդատի կիսանդրին Օլիմպիա բերելը հարգանքի մեծ տուրք է Հին հունական օլիմպիական խաղերին, հույն ժողովրդին, եւ նրա առկայությունը կնպաստի ժողովուրդների բարեկամությանը:

Լեւոն Թոմաջյանին առաջարկվեց կերտել ժամանակակից օլիմպիական խաղերի հիմնադիր Պիեռ դը Կուբերտենի կիսանդրին: Առաջարկն ընդունվեց եւ տաղանդաշատ քանդակագործը նախաձեռնել է այդ աշխատանքը: Նախատեսվում է, որ օլիմպիզմի վեր գաղափարների ջատագովի կիսանդրին Վարազդատ թագավորի կիսանդրու կողքին կտեղադրվի հուլիսի սկզբին: Թոմաջյանը օլիմպիական թեմաներով այլ քանդակներ էլ է նախաձեռնել: Դրանցից մեկը, հավանաբար, կտեղադրվի Լոնդոնում:

ՖՈՒՏԲՈԼ

Երեսուներկու տարի անց

Եվրոպական ֆուտբոլային մրցաշրջանն ավարտվեց: Եվ ավարտվեց եվրոպական երկրների ակումբային թիմերի ամենահեղինակավոր գավաթի խաղարկությամբ: Չեմպիոնների լիգայի եզրափակիչ խաղում հանդիպեցին Թուրինի «Յուվենտուս» եւ Մադրիդի «Ռեալ» թիմերը:

Ամստերդամի «Արենա» մարզադաշտում կայացած հանդիպումը մեծ հետաքրքրություն էր առաջացրել: 50 հազար հանդիսականների թվում էին իտալացի եւ իսպանացի համարյա 30 հազար ֆուտբոլասերներ, որոնք Հոլանդիայի մայրաքաղաք էին ժամանել 200 չարտերային ավիաչվերթներով:

«Ռեալին» է պատկանում յուրօրինակ ռեկորդը. թիմը Չեմպիոնների գավաթի խաղարկությունում հաղթել էր 6 անգամ: Սակայն իսպանացիները պատվավոր մրցանակին տիրել են հեռավոր 50-ական եւ 60-ական թվականներին: «Ռեալը» գավաթը վերջին անգամ նվաճել է 32 տարի առաջ 1966-ին: Մադրիդցիները բավականին անհաջող անցկացրեցին Իսպանիայի այս տարվա առաջնությունը՝ ի վերջո հանգրվանելով համեստ 4-րդ տեղում: Ի տարբերություն «Ռեալի», «Յուվենտուսը» այս մրցաշրջանում շատ կայուն խաղ ցույց տվեց. թիմը վստահորեն նվաճեց Իտալիայի չեմպիոնների կոչումը: Հետաքրքիր է, որ «Յուվենտուսը» վերջին 4 տարում եվրագավաթների եզրափակիչ է դուրս գալիս: Աստղագետների մեծ մասի կարծիքով, իտալական թիմի կազմը ոչ միայն ավելի հավասարակշռված է, այլ նրանում ավելի շատ են ֆուտբոլային աստղերը: Բոլոր առումներով ավելի բարձր էին գնահատվում «Յուվենտուսի» հնարավորությունները, սակայն հայտնի ճշմարտություն է՝ ամեն ինչ խաղադաշտում է որոշվում:

Ինչպես եւ սպասվում էր ֆավորիտից, «Յուվենտուսը» խաղն ակտիվ սկսեց: «Ռեալի» դարպասին վտանգավոր հարվածներ հասցրեցին Դիդյե Դեշամը, Զինեդին Զիդանը, Անջելո դե Լիվիոն: Սակայն որոշ ժամանակ անց իսպանական թիմը կարողացավ հավասարեցնել խաղը: «Ռեալի» ֆուտբոլիստներն իրենք էլ բավականին վտանգավոր պահեր ստեղծեցին մրցակցի դարպասին: Հիշատակման արժանի են Ֆեռնանդո Հիերոյի տուգանային հարվածը, Ռուլլի մոտ տարածությունից կատարած հարվածը, որը մի փոքր շեղ անցավ ձողափայտի կողքով: Նշենք, որ Մադրիդի թիմի համարյա բոլոր գրոհներին մասնակցում էր նրանց հարձակողական ոճի պատասխան, բրազիլացի Ռոբերտո Կառլոսը: Բացի այդ, գերմանացի մարզիչ Յուրգեն Հայնեկեսը [illegible]ներն այնպիսի տակտիկա էին ընտրել, որի շնորհիվ «Յուվենտուսին» զրկել էին իրենց ոճով գործելու հնարավորությունից: Վերջինիս ֆուտբոլիստներին, հավանաբար, նաեւ կաշկանդել էր խաղի կարեւորությունը: Այդպես էլ մինչեւ խաղի վերջը Թուրինի թիմի առաջատարներ Զիդանը, Ալեսանդրո դել Պիերոն, Ֆիլիպո Ինզագին լիովին չդրսեւորեցին իրենց հնարավորությունները:

Հանդիպումն անցավ լարված պայքարում: Թերեւս, «Ռեալի» ֆուտբոլիստները, մոռանալով մրցաշրջանի բոլոր անախորժությունները, հաղթանակի ավելի մեծ կամք դրսեւորեցին: Եվ նրանց ջանքերը պսակվեցին հաջողությամբ: Հանդիպման 66-րդ րոպեին, մադրիդցիների գոհի ժամանակ, «Յուվենտուսի» խաղացողները սխալ թույլ տվեցին: Գնդակն անցավ Պրեդրագ Միյատովիչին, որն առաջ անցավ մրցակցի պաշտպաններից, ապա խաբեց տվեց նաեւ դարպասապահ Անջելո Պերուջիին եւ սառնասրտորեն գրավեց իտալացիների դարպասը: «Ռեալի» հարավսլավացի խաղացողի խփած այս գոլը միակը եղավ: Խաղի վերջին րոպեին հաշիվը հավասարեցնելու լավ հնարավորություն ունեցավ էդգար Դավիդսը, սակայն իսպանացիների դարպասապահ Բոդո Իլգները այս անգամ եւս, ինչպես ամբողջ հանդիպման ընթացքում, վստահ խաղաց:



Այսպիսով, Մադրիդի «Ռեալը» արժանի հաղթանակ տարավ 1-0 հաշվով եւ պատմության մեջ 7-րդ անգամ նվաճեց Չեմպիոնների գավաթը:

Թիմի հաղթանակը մեծ արձագանք գտավ Իսպանիայում: Դրան հաջորդած ողջ գիշերվա ընթացքում 100 հազարավոր մադրիդցիներ քաղաքի հրապարակում ուրախ նշում էին սիրելի թիմի հաղթանակը: «Թագավորական ակումբի» հաղթանակը յուրովի «նշվեց» նաեւ Կատալոնիայում: Ինչպես հաղորդում է իսպանական «Անտենա 3 ռադիո» հեռուստաալիքը, տեղի «Բարսելոնի» երկրպագուները կոիվներ սարքեցին «Ռեալի» համար ցավող ֆուտբոլասերների հետ: Սակայն պարզվում է, որ մադրիդցիների հաղթանակի առթիվ ավելի շատ ուրախացել էին Սեւիլիայում, քանի որ երկրի առաջնության 8-րդ տեղը գրաված «Բետիսը» իրավունք ստացավ հանդես գալու ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում:

ԼՈՒՐԵՐ

Աղահովել են բրոնզե մեդալներ

Մինսկում շարունակվում է բոքսամարտի եվրոպայի 32-րդ առաջնությունը: Հայաստանի 2 ներկայացուցիչներ՝ Արյոմ Սիմոնյանը (57 կգ) եւ Արթուր Գեւորգյանը (60 կգ), քառորդ եզրափակիչում հաղթելով իրենց մրցակիցներին, մտան կիսաեզրափակիչ՝ դրանով իսկ աղահովելով առնվազն բրոնզե մեդալներ: Նման հաջողության հույս ունի նաեւ Վախթանգ Դարչինյանը (51 կգ), որը երեկ ուշ երեկոյան անցկացրեց իր հերթական մենամարտը: Ցավոք, պայքարից դուրս մնացած մեր հանրապետության 4 բոքսամարտիկներին միացավ աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր Արամ Ռամազյանը, որը պարտություն կրեց քառորդ եզրափակիչում:

Յոթ փուլից հետո

Իրանի Թավրիզ քաղաքում շարունակվում է միջազգային բազմօրյա հեծանվավազքը, որի մասնակիցների թվում են նաեւ Հայաստանի ներկայացուցիչները: Անցկացված 7 փուլից հետո թիմային հաշվարկում առաջատար է Իրանի հավաքականը, երկրորդ տեղում է Ղազախստանի հավաքականը: Հայաստանի հեծանվորդները, որոնք 3-րդ փուլից հետո ընթանում էին առաջին տեղում, այժմ երրորդն են: Անհատական հաշվարկում հեծանվավազքը գլխավորում է Հայաստանի թիմի անդամ Արսեն Ղազարյանը: Նա պահպանում է նաեւ մրցումների ամենաակտիվ հեծանվորդի կոչումը: Մրցումների ավարտին 5 փուլ է մնացել:

Մասնակցում են Փխակաձեի մրցանակի խաղարկությանը

Թբիլիսիում ավանդաբար անցկացվում է աշխարհի, խորհրդային Միության բազմակի չեմպիոն ու ռեկորդակիր Օմարի Փխակաձեի մրցանակի խաղարկությունը հեծանվահրապարակային մրցաձեւերից: Հերթական մայիսի 21-22-ը անցկացվող միջազգային այս մրցումներին մասնակցում են նաեւ մեր հանրապետության 7 մարզիկներ: Նրանք բոլորն էլ երիտասարդ հեծանվորդներ են, «Հայաստան» մարզական միության անդամներ:

«Ջիրո դ'Իտալիա» հեծանվավազքում

Արդեն 81-րդ անգամ անցկացվող «Ջիրո դ'Իտալիա» հեծանվավազքը բավականին հեղինակավոր է, այդ առումով այն զիջում է, թերեւս, միայն «Տուր դը Ֆրանս»-ին: Այս անգամ մեկնարկի են դուրս եկել 18 թիմեր: Հեծանվորդները բավականին երկար ճանապարհ պետք է հաղթահարեն 3868 կիլոմետր, որը բաղկացած է «նախաբանից» եւ 22 փուլից:

4-րդ փուլը ամենաերկարներից էր. Վիարեջո-Մոնտե Արգենտարիո բնակավայրերի միջեւ ընկած մրցաշարածությունը 239 կիլոմետր էր: Այս փուլում գլխավոր իրադարձությունները ծավալվեցին, երբ եզրագծին 4 կիլոմետր էր մնացել: Ընդհանուր խմբից առաջ անցավ իտալացի Նիկոլո Միչելին, որը եւ հաղթեց մրցաշարածությունում: Նրա ցույց տված ժամանակն է 6 ժամ 15 րոպե 29 վայրկյան: Պատվո պատվանդանի 2-րդ եւ 3-րդ աստիճաններին եւս իտալացիները կանգնեցին՝ համապատասխանաբար Միքելե Բարտոլին եւ Մարիանո Պիկկոլին:

Իսկ չորս փուլերի ընդհանուր արդյունքով հեծանվավազքը գլխավորում է ուկրաինացի Սերգեյ Գոնչարը:

Առաջատարը «Գրանդ» ակումբն է

Գյումրիում անցկացվեցին բասկետբոլի հանրապետության կանանց առաջնության 2-րդ տուրի խաղերը: Ցավոք, ինչ-ինչ պատճառներով մրցավայր չժամանեց Հայաստանի կրկնակի չեմպիոն Արարատի «Ավարայրը»: Առաջնության անդրանիկ տուրից հետո երկրորդ տեղում ընթացող թիմն այժմ եզրափակում է աղյուսակը, քանի որ նրա միավորները մնացին նույնը (հաղթանակի դեպքում թիմը 2 միավոր է ստանում, պարտության դեպքում՝ 1): Իր բոլոր հանդիպումները հաղթանակով ավարտեցին Հայաստանի ներկայիս չեմպիոնները՝ Երեւանի «Գրանդ» ակումբի բասկետբոլիստները, որոնք վստահորեն գլխավորում են առաջնությունը:

Մրցաշարային աղյուսակ

2-րդ տուրից հետո

	Խ	Հ	Պ	Գ	Մ
1. Գրանդ	7	7	0	668-381	14
2. ՖԻՍԱ	7	5	2	474-442	12
3. Պոլիտեխ.	7	2	5	498-506	9
4. Գյումրի	7	2	5	415-545	9
5. Ավարայր	7	3	4	337-518	7

Մրցաստարեզում 4 մասնակիցներ են

Կալմիկիայի մայրաքաղաք Էլիստայում ավարտին են մոտեցել Նախագահի գավաթ անվամբ շախմատային խոշոր մրցումները:

Այսպես կոչված նոկաուտ-համակարգով անցկացվող մրցումներում 32 շախմատիստներից մրցաստարեզում մնացել են 4-ը:

Հաղթողի կոչման համար պայքարում են Վասիլի Իվանչուկը (Ուկրաինա) եւ Ալեքսանդր Գելֆանդը (Ռուսաստան): Երրորդ-չորրորդ տեղերը վիճարկում են Ռուսաստանի երկու ներկայացուցիչներ՝ Եվգենի Բարեեւը եւ Ալեքսեյ Դրեւը: Եզրափակիչ մրցախաղերում, ի տարբերություն նախորդ փուլերի, 4-ական պարտիա է անցկացվում: Իսկ 2-2 հաշիվ գրանցվելու դեպքում մենամարտերի մասնակիցները կանցկացնեն երկու կարճեցված ժամանակակարգով, իսկ եթե հարկ լինի՝ նաեւ կայծակնային խաղեր:

Մրցախաղերում երկուական պարտիաներ են անցկացվել: Իվանչուկ-Խալիֆման մրցախաղի առաջին պարտիայում հաղթեց ուկրաինացի շախմատիստը, սակայն երկրորդում Խալիֆմանին հաջողվեց հավասարեցնել հաշիվը: Բարեեւ-Դրեւ մրցախաղում նույնպես հաշիվը 1-1 է: Այստեղ մրցակիցները երկու խաղերն էլ ոչ-ոքի են ավարտել:

Վասիլի Իվանչուկ

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՇՏԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքով

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վարդան Օսկանյան. Ղարաբաղի հարցի լուծումը տարածաշրջանային նշանակություն ունի

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը մայիսի 21-ին «Միջազգային հարաբերությունների արդի զարգացումները եւ նրանց ազդեցությունը Կովկասյան տարածաշրջանի եւ Հայաստանի վրա» թեմայով դասախոսություն կարդաց Հայաստանի ամերիկյան համալսարանում: Բազմաթիվ ունկնդիրների շարքում էին նաեւ Հայաստանում հավատարմագրված մի շարք դեսպաններ ու այլ պաշտոնյաներ:

Պրն Օսկանյանը դասախոսության սկզբում անդրադարձավ սառը պատերազմի ավարտից հետո միջազգային ոլորտում ստեղծված նոր հարաբերությունների որակին: Այսօր փաստորեն քաղաքական համակարգը միաբեւեռ է դարձել, ընդլայնվում են միջազգային կազմակերպությունների շրջանակները, ֆինանսական նոր լծակների պայքար է ընթանում եւ պարզ չէ, թե մարդկությունը ինչպիսի համակարգով կմտնի 21-րդ դար:

Այդ անորոշությունն իր կնիքն է դնում մեր տարածաշրջանի ու Հայաստանի վրա, բարդացնելով մեր երկրի արտաքին քաղաքականության խնդիրները: Ըստ պրն Օսկանյանի, Հայաստանը միաժամանակ ընդգրկված է Կովկասի ենթահամակարգում, որին բնորոշ է սինկայուն իրավիճակը: Տարածաշրջանի նկատելի շահերի բախումը, ի տարբերություն այլ տարածաշրջանների: Պրն Օսկանյանն առանձնացրեց Կովկասյան ռեգիոնում չորս աղակայունացնող գործոն: Երկրների ներքին քաղաքական համակարգերը դեռ չեն կայունացել (այդ թվում տասնյակ տարիներ անկախություն ունեցող Թուրքիայում ու Իրանում), այստեղ ակնհայտ է արեւմուտք-արեւելք բեւեռացումը, տնտեսական բարդություններն ու բնական ռեսուրսների անհավասար բաշխումը պետություններում:

Նշված բոլոր բարդությունների ու ԽՍՀՄ փլուզման կիզակետում հայտնվեց Հայաստանը, որը, ըստ արտգործնախարարի, ամենաշատն է տուժել այդ գործընթացներից: Հայաստանի արտաքին քաղաքականությունը պետք է ուղղված լինի առաջին հերթին տարածաշրջանում ապակայունացնող գործոնների վերացմանը: Իսկ դա կարելի է իրականացնել մասնավորապես հետեւյալ ճանապարհներով. Հայաստանը պետք է դառնա տարածաշրջանում փոխզիջողական քաղաքականության, մարդու իրավունքների դրսեւորակիրը, պետք է նպաստի տնտեսության համահավասար զարգացմանը հարեւան երկրներում, ռեգիոնալ կառույցների գործունեությունը արդյունավետ պիտի դարձվի առաջին հերթին շեշտը դնելով տնտեսական համագործակցության վրա: Կարեւոր է նաեւ սառը պատերազմի հոգեբանության վերացումը, Թուրքիայի հետ երկկողմ ու նոր որակի հարաբերությունների հաստատումը, որը կբացառի նախապայմանների թելադրումը:

Հայաստանի արտաքին քաղաքականության ամենակարեւոր խնդիրը, բնական է, ԼՂՀ հակամարտության խաղաղ կարգավորումն է: Ըստ պրն Օսկանյանի, Հայաստանի նոր իշխանությունը հանդես է եկել հարցի կարգավորման նոր մոտեցումներով, որը ներառում է առաջին հերթին խնդիրը խաղաղ միջոցներով կարգավորելու ցանկությունը, փուլային լուծման բացառումը (առանց ԼՂՀ կարգավիճակը որոշելու չպետք է հողային զիջումներ կատարվեն), նախապայմաններից հրաժարումը: Ղարաբաղը պատմական, մշակութային, քաղաքական եւ այլ առումներով ունի անկախ պետություն լինելու բոլոր հնարավորությունները, սակայն հայկական կողմն այս փուլում չի պնդում ԼՂՀ անկախությունը կամ այն Հայաստանին միացնելը, քանի որ կարեւոր է համարում հակամարտության խաղաղ կարգավորմանը հասնելը: Սակայն դա չի նշանակում, թե ԼՂՀ-ն պետք է մնա Ադրբեջանի կազմում, թեկուզ փաստացի անկախ լինելով ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի միջեւ պետք է լինեն միայն հորիզոնական, պայմանագրային կապեր:

Ըստ Վ. Օսկանյանի, եթե միջազգային հանրությունը, մասնավորապես Մինսկի խումբն ու եռանախագահությունն ընդունեն այս մոտեցումները, ապա հակամարտությունը բանակցությունների միջոցով ա[illegible] կարգավորել: Սակայն, ինչպես հայտնի է, եռանախագահության անդամները օրերս Բաքվում հայտարարել են, թե նախկինում իրենց ներկայացրած ծրագրերը չեն փոփոխվելու: Պրն Օսկանյանը, բացասական գնահատական տալով այդ հայտարարությանը, նշեց, որ այնուամենայնիվ պետք է փորձեն վերանայել իրենց տեսակետները: Անձամբ Վարդան Օսկանյանը հույս ունի, թե հայկական կողմն իր տեսակետների վրա ամուր կանգնելու դեպքում եռանախագահությունը կփոփոխի նախկին մոտեցումները:

Ըստ Է. Շեւարդնաձեի ոլորտի, Վրաստանի Սենատի նախագահի պաշտոնը կգրավի Աբխազիայի ներկայացուցիչը

ԹԲԻԼԻՍԻ, 21 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Մոտ ժամանակներս հրապարակվելու է Վրաստանի երկրի պետական կառուցվածքի վերաբերյալ նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի ոլորտը, որտեղ Աբխազիային տրամադրվում է ավելի լայն կարգավիճակ, քան ՌԴ-ում ունի Թաթարստանը: Այս մասին Բի Բի Սի ռադիոկայանին հաղորդել է Վրաստանի նախագահի մամլո քարտուղար Վախթանգ Աբաշիձեն:

Ըստ նրա, Շեւարդնաձեի ոլորտով Վրաստանը բարդ ունիտար պետությունից պետք է վերածվի Վրացական Դաշնակցային Հանրապետության եւ որպես հիմք ընդունվում է Ռուսաստանի մոդելը: Վրացական դաշնության օբյեկտներ կդառնան նախկին ինքնավարությունները՝ Աբխազիան, Աջարիան եւ Հարավային Օսիան (ընդ որում Հարավային Օսիան կլինի հանրապետություն), ինչպես նաեւ Վրաստանի պատմական մարզերը՝ Կախեթիան, Քարթլին, Իմերեթիան: Նրանցից յուրաքանչյուրը տարածքով եւ բնակչությամբ համարժեք է նախկին ինքնավարություններին: Նոր վարչական դաշնության սուբյեկտները կլինեն ընդամենը 12-ը:

Դաշնության տարբեր սուբյեկտները, ինչպես որ Ռուսաստանում, կունենան լիազորությունների տարբեր մակարդակներ, նշել է նա, ավելացնելով, որ Աբխազիան ունենալու է ավելի շատ իրավունքներ, քան Կախեթիան: Կենտրոնը նախկին ինքնավարությունների հետ կկնքի դաշնային պայմանագրեր: Ընդ որում պայմանագիրն առաջարկվում է մշակել այն հանրապետության ներկայացուցիչների մասնակցությամբ, որի հետ կնքվելու է այն: Այսուս սուբյեկտների Վրաստանի երկրամասերի, ինչպես նաեւ Թբիլիսիի կարգավիճակը սահմանվելու է հատուկ օրենքով յուրաքանչյուր առանձին դեպքում:

Ըստ է. Շեւարդնաձեի ոլորտի, Վրաստանը ունենալու է երկու պալատից կազմված խորհրդարան, իսկ Սենատի նախագահի պաշտոնը մշտական հիման վրա կգրավի Աբխազիայի ներկայացուցիչը: Կենտրոնի բացառիկ լիազորությունների մեջ կներառվեն պաշտպանությունը, դրամա-վարկային քաղաքականությունը, արտաքին սահմանների պահպանությունը: Աբխազիայի դեպքում բացառություն կարվի՝ Աբխազիան կունենա իր գվարդիան եւ իր սահմանները ինքը կպահպանի դաշնային զորքերի հետ: Սակայն Աբխազիան համաձայն չէ եւ պահանջում է ստեղծել վրաց-աբխազական ունիա Չեխոսլովակիայի օրինակով, այսինքն պահանջում է համադաշնություն:

ԱՇԽԱՐՀ

Հնդկաստանը հաջողությամբ փորձարկեց նորագույն հրթիռային կայանք

ԴԵԼԻ, 21 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Հնդկաստանը կատարել է «Փինակա» համազարկային կրակի նորագույն հրթիռային կայանքի հաջող փորձարկում: Այդ կայանքն ընդունակ է 44 վայրկյանի ընթացքում 12 հրթիռ արձակել եւ հակառակորդի թիրախը խոցել մինչեւ 40 կիլոմետր հեռավորության վրա: Հրթիռները կարող են նպատակակետին հասցնել տարբեր տիպի մարտագլխիկներ: Հատկանշական է, որ հրթիռային կայանքի «Փինակա» անվանումը փոխառված է հնդկական դիցաբանությունից եւ նշանակում է «Շիվայի նետ», որը ավերման ահեղ եւ անողոք աստվածն է: Իրոք, հնդիկ մասնագետների մշակած հրթիռներն ամենից առաջ նախատեսված են հակառակորդի՝ առանձնապես ամուր երկարաժամկետ կրակակետերի համար:

Թեհրանի քաղաքապետը ձեւավորեց նոր քաղաքական կուսակցություն

ՏՐԵՎԱՆ, 21 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Իրանի կառավարությունը բարձրաստիճան անձանց մի խմբի թույլատրել է քաղաքական կուսակցություն ձեւավորել, որը կլինի 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո Իրանում ստեղծված առաջին կուսակցություններից մեկը: Ինչպես հաղորդում է Բի Բի Սի ռադիոկայանը, այս խումբը աջակցել է նախագահ Խաթամիին անցյալ տարվա նրա նախընտրական արշավի ընթացքում: Խմբի կենտրոնական դեմքը Կարբաշին է՝ Թեհրանի քաղաքապետը, որի ձերբակալությունը ապրիլ ամսին հանգեցրեց նախագահի կողմնակիցների եւ երկրի պահպանողական ուժերի բացահայտ առճակատման:

Դեմիրելը ժամանեց Ուկրաինա՝ զարգացնելու համագործակցությունը

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ-ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: Մայիսի 21-ին եռօրյա պաշտոնական այցով Ուկրաինա ժամանեց Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը: Ուկրաինայի արտգործնախարարության մամլո խոսնակը հայտնել է, թե երկու երկրների նախագահների հանդիպման ընթացքում քննարկվելու են երկկողմ համագործակցության խնդիրներ, ստորագրվելու են մի շարք համաձայնագրեր՝ կապերի հետագա զարգացման ու խորացման նպատակով, մասնավորապես՝ տնտեսական ու մշակութային ոլորտներում: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, Դեմիրելը կայցելի նաեւ Ղրիմ՝ հանդիպելու տեղի ղեկավարության ու թաթարների ներկայացուցիչների հետ: «Իմ այցելության նպատակը մեր երկրների համագործակցության զարգացումն է բոլոր բնագավառներում», Կիեւի օդակայանում հայտարարել է Դեմիրելը: Նախատեսվում է պայմանագրեր ստորագրել ռազմարդյունաբերության, առողջապահության, առեւտրի ու կրթության բնագավառներում, ինչպես նաեւ օտարերկրյա ներդրումների պաշտպանության վերաբերյալ:

Թուրքիայում մի քանի հարյուր բնակավայր մնացել է ջրի տակ

ԱՆԿԱՐԱ, 21 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Մայիսի 17-ին սկսված ուժեղ անձրեւների պատճառով Թուրքիայի մի քանի շրջաններում Կարսից Սեւ ծովի ափերով մինչեւ Մարմարա, Թրակիա, Զոնգուլդակ եւ այլ շրջաններում ջրհեղեղի մակարդակը մայիսի 21-ին հասել է անասելի չափերի: Մի քանի հարյուր բնակավայր մնացել է ջրի տակ:

Ըստ թուրքական հեռուստատեսության հաղորդած տվյալների, երկու երեխա զրկվել են ոտքերից, 11 հոգի անհետ կորել են: 200 մարդ լիովին կղզիացած են: Նրանց փրկելու համար գործի են դրվել 3 ուղղաթիռներ, 7 զինվորական փոքր նավակ: Ոտքի են հանված ռազմածովային ուժերի բազմաթիվ զորածառայողներ:

Անկարայում խորհրդարանի նիստ է ընթանում փրկարարական աշխատանքը կազմակերպելու նպատակով: Թուրքական կառավարությունը օգնության համար հատկացրել է 281 մլրդ թուրքական լիրա:



ՎԱՃԱՌՎՈՒՄ է
կիսանկուղային տարածք 132,6 քմ. ընդհանուր մակերեսով, վերանորոգված, ունի սանհանգույց:
Հասցեն՝ Նալբանդյան 29:
Տեղեկությունների համար զանգահարել 57-16-16 հեռախոսահամարով:

ԼՈՒՇԱՐՎՈՒՄ է
«Շարժիչ» արտ. կոոպերատիվը գրանցված 1988 թ. հունիսի 6-ին N 14/87 որոշմամբ, Օրջոնիկիձեի շրջանում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«Կոմանդոս-Ս» ԴՀ-ը լուծարվում է: Ձեռնարկության պետական գրանցման վկայականի համարն է 01Ա027996, ներդիր N 002

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)
«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 827. Տպաքանակը 3500. Ստորագրված է տպագրության՝ 21.05.1998. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@